



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ԳԵԹՍԵՄԱՆԻ

ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՇՈՒԹԻՒՆՆԵՐ

1903 — 1904



ԶԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒ

Կ. Պոլիս Չախմախչյան քիչ.

Քերտչ Գուլե-գարու քիչ 69

Կ. ՊՈԼԻՍ

ՊԱԿՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1905

891.99

9-21

01 JAN 2009

DEC 2011

Գ. Ղ. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ

891.99

Գ-21

✓

Գ Ե Թ Մ Ե Մ Ա Ն Ի

ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵԼՇՈՒԹԻՒՆՆԵՐ

1338

1903—1904



ԶԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Զախմեմարտի
 Բերայ Գուշի-գարու թիւ 695

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1905

13 MAR 2013

24831

2033

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳԻՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՅԱՌԱՆՈՑ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինանսներու եօզուտու, Կ. Պոլիս

معارف عمومیہ نظارت جلیہ سنک ۱۴ محرم ۱۳۲۳ و ۸ مارت
۱۳۲۱ تاریخی و ۱۱۱۵ نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدر

Ա Ռ
Տ Օ Ք. Թ Ո Վ Մ Ա Ա Ս Տ. Ք Ր Ի Ս Թ Ի
Ե Ւ Ա Ռ
Տ Ի Կ Ի Ն Բ Ա Ր Մ Է Լ Ի Թ Պ. Ք Ր Ի Ս Թ Ի
Տ Է Ր Ե Ւ Տ Ն Օ Ր Ի Կ Ո Ւ Կ Ի
Ս Բ. Պ Օ Ղ Ո Ս Ե Ա Ն Ա Ս Ե Ր Ի Կ Ե Ա Ն Գ Ո Լ Է Ժ Ի Ն
Տ Ա Ր Ս Ո Ն

Ձ Օ Ն
Խ Ո Ր Ի Ն Յ Ա Ր Գ Ա Ն Ա Յ Ո Ւ Ե Ր Ա Ն Տ Ա Պ Ա Ր Տ Զ Գ Ա Յ Մ Ա Ն Յ
Գ Ր. Զ. Գ.

DEDICATED
to
Rev. THOMAS D. CHRISTIE, D. D., LL. D.,
President of ST. PAUL'S INSTITUTE,
TARSUS, Asia Minor,
and to
Mrs. CARMELITE B. CHRISTIE.

Մ Ո Ւ Տ Ք


Յաճախ մարդկային հողին հիացիկ,
Դիւթուած բնութեան բիւր հրապոյրներէն,
Ազուր թռչունէն, ծաղկէն գեղեցիկ
Կը թրթռայ իբրև քընար փափկօրէն,
Ու իր շեշտերով ներդաշնակ ա՛յնքան
Կ'եզանակէ բաղբը, հնչուն, սիրական
Բնութեան երգերը...:

Շատ անգամներ ալ երբ սիրտ-վանդակէն
Սէր-թռչունը իր թեւախումբերով
Շարժի, խօ՛ւ յոյզեր պտուտքին տակէն,
Առթելով անոր նոր աշխոյժ կորով-
Ալ մագնիսացած վանկերով քնքոյշ
Կ'երգէ մյնքան վարժ ու մյնքան անուշ
Սիրտի երգերը...:

Ու երբ վերանայ նիւթի աշխարհէն,
Երկինքի փառքեր շլացնեն իր աչեր,
Ատուած, Սէրն Անոր երբ զինքը վառեն,
Խնկի աղօթքով, հալի սիրաչեր-
Այն ատեն իբրև երկնաւոր հրեշտակ,
Կ'երգէ Ատուծոյ սուրբ մատներուն տակ
Կրօնքի երգերը...:

1904

Տարուն — Գոյիճ



Գ Ե Թ Ս Ե Մ Ա Ն Ի

ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ Ե Թ Ս Ե Մ Ա Ն Ի Ն*

ԳԵԹՍԵՄԱՆԻՆ մահուան ձորն էր ուրկէ Դ՛՛՛՛ն ալ
երբ կ'անցնէիր ըստիպուեցար արթուն մընալ .
Գեթսեմանին սրբավայրն էր ուր արցունքով
Աղօթեցիր երկնաւոր Հօրդ սիրագորով :
Գեթսեմանին նոր դպրոցն էր ուր մարդեցիր
Քուկինները որ ըլլան քաջ ու ցաւակիր :
Գեթսեմանին պարտէզն էր ուր ոռոգեցիր
Արցունքներովդ կեանքի ծառը այն կենացիցիր :
Գեթսեմանին տառապանքն էր Քու մեծ սիրտին՝
Չոր առթեցին մեր հոգեպան մեղքեր կրկին :

* Գեթսեմանի Եփրայեցիքէն բառ է ու կը նշանակէ Մահու Յէլոյ : Չիթեն-
եաց լեռան ստորոտին վրայ : Նովեմբ 1871, պարտեղ կամ ծառատան մը ուր
Քրիստոս մտնուեցաւ : Հաւանականաբար այս սնունդը առած էր հին տասն հին

Գեթսեմանին Յորդանն էր ուրիշ անցար,
 Որ մեզ տանիս վերին Քանանն անհուն, անծայր:
 Գեթսեմանին Յիսուս, կեանքիդ է՛ն մեծ գործն էր,
 Աւելի՛ մեծ ըստեղծելէ բիւր աշխարհներ:
 Գեթսեմանին վատ մատնութեան բերաւ Քեզ ցաւ,
 Սէրը սիրոյ նշանով մը մատնուեցաւ:
 Գեթսեմանին համակրողներդ ոսոխ ըրաւ,
 Երբ բերաւ Քեզ նախատինքներ, ծեծ անիրաւ:
 Բայց ամէնուն մեծ սիրովդ համբերեցիր,
 Յուզելով մեծ գթութեան ծովն անծայր, անծիր:
 Նախածնողքին տեղ մարդկութեան պարտէզ մըսար
 Որ անս ըտոր հողիներուն տեղ ու զազար:
 Ճաշակեցիր այնտեղ դառնն պտուղը ցաւին
 Որ դառնութեան, մեղքի հետքերը ջնջուին:
 Ու երբ հասաւ որոշուած ժամն անկէ ելար
 Մազըցելու սե գողգոթիան հողեհարչար:
 Որով միայն աղամական ան հին սերունդ
 Հրճուեցաւ, փրկուեցաւ նորածնունդ...:

* * *

Ուստի Յիսուս, ծունկերուդ հետ ծնրադրող,
 Թող ծունկերս ալ ծըռին խոնարհ դէպ ի հող.
 Վերամբարձիկ ձեռքերուդ հետ ձեռքերս ալ,

գանուող քիթատունէն, որուն կը վկայեն այն տեղուան հինուորց ձիթենիներ
 քարէ մեծ աւազանները: Ու այսպէսով սա խորհրդածութիւնը կ'արթնցնեն
 միտքերուն մէջ թէ՛ ինչպէս որ ձիթապտուղէն մամուլի ճնշումին տակ համեղած
 շակ ձիթ կը հանուէր, այնպէս ալ մեր փրկիչը տապնուայներու մամուլին տակ
 բիւն քրտինքի մէջ փրկութեան օծելիք իւրը — Ս. Հոգիին թափուելովը պատ
 ըստուեց, ու անմահութեան որկրոյդէն, անմահացու ցիչ գինի, սրբագործող արեւ
 արուեցաւ մեզ:

Թող երկինքի վերցնեմ փառքին լուսափայլ.
 Գլուխիդ հետ որ ծըռեցաւ դէպ ի վար,
 Երկրպագէ թող գլուխըս անխոնարհ.
 Աչերուդ հետ որ արցունքներ թափեցին,
 Աչերս զզջման արցունք թափեն թող կրկին.
 Ծուրթերուդ հետ որ աղօթքներ հոն ըրին,
 Թո՛ղ շուրթերս ալ աղօթք մըմնջել սորվին.
 Հոգիիդ հետ որ յօժար էր ամէնուն,
 Թող յօժարի ի՛մս ալ Սիրոյն փու անհուն...:

1904





Գ Ե Թ Ս Ե Մ Ա Ն Ի

ՎԱՅՆԼՔՆԵՐՈՒՆ մէջ իր շատ բազմաձև,
Յոյս-փրթթումներուն մէջըն ալ քանի,
Այսքան վաղանցիկ, այսքան կարճատև
Մեր այս աշխարհքի կեանքըն ալ ունի
Գեթսեմանի:

Յոյզերուն մէջը իր հոգեխըռով,
Որոնցմով սիրտը յաճախ կ'արիւնի,
Թէև ակաղձուն հըրապոյրներով,
Մեզի պաշտելի սէրըն ալ ունի
Գեթսեմանի:

Իր թռիչներուն մէջ երկնասլացիկ,
Բոլոր թափովն իր խանդի, աւիւնի,
Երջանիկ թէև՝ բայց տխրազգեցիկ
Խոկումներուն մէջ հոգին ալ ունի
Գեթսեմանի:

Քանի որ Փրկիչն գործը փրկութեան
— Որ կատարեց սուրբ զինովն արիւնի —
Զուգորդեց իր մեծ մահովն՝ յաւիտեան
Հոգիի փրկութիւնն ալ իր հետ ունի
Գեթսեմանի . . . :

Տ Ա Գ Ն Ա Պ Ն Ե Ր Ո Ւ Գ Ի Շ Ե Ր Ը

ՍՍԱԿԱՆ ՎԱՐԳ.ԻՆ

ՏԱԳՆԱՊՆԵՐՈՒ գիշերը, Գեթսեմանին մթաստուեր
Իր սև ծոցին մէջ Քեզ համար
Տառապանքներ ու ցաւեր
Կը պահէր սնահամար.
Հոն սուրբ աչերդ՝ աչերուս տեղ
Շատ թափեցին արցունք-հեղեղ,
Հոն տագնապի արիւն քրտինք թափեցիր,
Որով ցօղեց վրաս շնորհքը կենսացիր:
Շատ չարչրկեց Քու ընկճուած, տկար մարմինդ կիտաւեր
Տագնասպներու գիշերը, Գեթսեմանին մթաստուեր:

Տագնասպներու գիշերը աղօթեցիր ծնրադիր
Որ մարդկութեան մեղքերը հին
Հայրըդ սրբէ անխըտիր,
Ու ցաւեր կորսուին.
Նախածնողքիս անէծքը հին
Հոն ջնջեցիր բոլորովին,
Հոն մարմինըդ տրկար թէև՝ բայց յօժար
Հոգիդ չխտկեց արդարութեան սուրբ նըժար:
Նախասացուած տանջանքնիդ բեռին տակ ծանրակիր,
Տագնասպներու գիշերը աղօթեցիր ծնրադիր:

Տագնաագներու գիշերը դառըն բաժակը մահուան
 Հրեշտակը քեզ մատուռակէր,
 Որով պիտի մի միայն
 ժանտ մահը խորտակուէր:
 Հո՛ն լուծեցիր իմ պինդ կապեր
 Որոնք ամուր ու աներեր
 Կաշկանդէին, ու ես բանտուած խեղճ գերի,
 Կը հեծէի ողբ ու լացի մէջ կարի:
 Ազատագրեց իմ հոգին փրկութիւնով անխափան
 Տագնաագներու գիշերը, դառըն բաժակը մահուան:

Տագնաագներու գիշերը, Գեթսեմանին մահաստուեր
 Ինձի համար տօն մ'է մեծ,
 Որովհետեւ իմ ցաւեր
 Փրկիչըս բըժշկեց:
 Այլ դժոխքը չունի սարսափ,
 Չունի մահը փուշեր տագնապ.
 Այլ կը փայլի յաղթանակը սուրբ խաչին,
 Պարտուեցաւ Մահն, ռիսերիմն իմ վերջին.
 Զի Յարութեան բերաւ ինձի աւետիսը սրբանուէր
 Տագնաագներու գիշերը, Գեթսեմանին մահաստուեր...

1904



Ն Ե Ն Գ Ո Տ Հ Ա Մ Բ Ո Յ Ի Ը

Մասք. ԻԳ. 49:
 Մարի. ԺԳ. 45:
 Ղուկ. ԻԲ. 47:

ՀԵՏԵԳ մընալ ու աշակերտ Բեզ ըլլալ
 Մտիկ ընել ան շուրթերուդ մեղրածոր.
 Ունիլ բոլոր իմաստութիւնդ հոգեզմայլ,
 Ու սուրբ կամքիդ տեղեկանալ օրէ օր,

Նոյնիսկ համայն բարիքներուդ երկրաւոր
 Գանձապահը ըլլալ բոլոր կեանքի մէջ,
 Մատակարարդ, ծառադ ըլլալ ամէն օր,
 Ու վայելել շքնորհքները Քու անվերջ,

Բեզ հետ երթալ ամէն տեղ ուր դացիր Դուն,
 Վերնատունի մէջ հետդ ըլլալ հացակից.
 Վայելել միշտ խրնամքներդ, Սէրդ անհուն
 Ու լուացուիլ ձեռքերովդ Քու ամբիծ.

Ու նորէն ս'հ... , ալ համբոյրը մասնութեան,
 Նենգո՛տ համբոյր պիղծ շուրթերու դրուժան.

Ան մեր «Ես»ին չար տենչանքն է, վատ Յուդան
Քու երկնաւոր բարիքներուդ անարժան... :

Ան դարերու նենգոտ Յուդան կ'ապրի դեռ,
Ան ապերախտ դաւաճանը տիրանենդ.
Ան սիրտերը մահացնելու ունի դեր,
Մենք ալ անոր դրդումին միտ կը դնենք... :

Մեր մեղսասէր ընտթիւնն է ան չար Յուդան,
Որը արդեօք խեղդել պիտի կրնամք մենք.
Ան մատնիչը մեր հոգեւոր վերնատան,
Սուտ համբոյրին ան ծընողը չարանենդ... :

1904



Մ Ե Ծ Դ Ա Ս Ը

Վ ԵՐՆԱՏԱՆ մէջ խոնարհութեան մեծ դասին,
Աշակերտներդ համախմբուած միասին,
Չարմանային օրինակիդ պերճախօս,
Լուացումի այն աղբիւրին երկնահոս :

1338

Անոնք որ մեծ ըլլալու ջերմ փափաքով
Հակաճառել կը փորձէին Քուկին քով,
Արդեօք Քու տուած խոնարհութեան մեծ դասին
Օրինակէն հիացած ինչ ըզգացին :

Գիտցան արդեօք թէ մեղսասէր չար մարդուն
Չարժեր իր հպարտ եւր պահել միշտ արթուն.
Այլ ապաշաւ ու ըստրջանք իր բաժին,
Իր վէրքերը սոսկ զզջումով կը բուժին... :

Ան սուրբ ձեռքը իրենց ոտքեր կը լուար,
Ու սուրբ սիրտը ներէր իրենց սիրավառ.
Սուրբ շուրթերը փարատէին վախն իրենց,
Սորվեցնելով ճշմարտապէս ըլլալ մեծ :

Բայց չէ՛ , մարդիկ սորվիլ , գիտնալ չեն ուզեր ,
 Խոնարհութեան ու սրբութեան այն դասեր .
 Եկեղեցին իր Յուզաներն ունի դեռ ,
 Ու պակաս չեն պաշտուիլ ուղող սէգ սիրտեր :

Չէ՛ , չէ՛ , չ'արժեր մարդուն ըլլալ եսասէր ,
 Մինչ կը կարդայ Քու օրինակն ու դասեր .
 Խոնարհութեան մէջ է գաղտնիքն մեծութեան ,
 Երանի՛ թէ չի մոռնայինք յաւիտեան . . . :

1904



Խ Ա Չ Ի Ճ Ա Մ Բ Ա Ն

Խ Ա Չ Ի ճամբան նախ՝ շատ դժուար չ'երեւար ,
 Չ'ունի այնքան տառապանքի մութ ժամեր .
 «Ովսաննա» յի քաղցր երգերով խանդավառ
 Լափոփելով , օրօրելով սիրտը մեր
 Երուսաղէմ կը տանի :

Բայց . . . քիչ յետոյ «ովսաննա»ներ կը լռեն ,
 Կոյր նախանձի կը բորբոքի կըրակը ,
 Խաչի ճամբան կը դժուարնայ սաստկօրէն ,
 Դրոշմել տալու մեզ մատնութեան կեղծ պաղը
 Գեթսեմանի կը տանի :

Կը տառապինք , կը չարչարուինք չարաչար ,
 Հոգւով , սիրտով կը խոցոտինք կարեւէր ,
 Խաչի ճամբան դեռ հանգիստի տեղ չի տար ,
 Մահուան բաժակն խմցունելու դէպ ի վեր
 Սեւ Գողգոթան կը տանի :

Անյոյս չըլլանք , Խաչի ճամբուն վերջն այս չէ՛ ,
 Դեռ Յարութեան պարտէղը կայ լուսավառ ,
 Դէպ ի երկինք սանդուղ չինած մեզ Խաչէ ,
 Ան՝ թե տալու հոգիներուն մեր տըկար
 Համբարձման լեռն կը տանի :

1903



ԽԱՉԻՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ

ՄԷԿԸ՝ որուն կեանքն բարիք էր բոլոր,
Բարեգործութեան բոլորով խնկուած .
Ու երկինք կ'ուզէր տանիլ անմոլոր,
Սիրտերը տըկար, բեկուն, վշտայրած .

Մէկը՝ որ կրցաւ երկինքի կեանքին
Վսեմ պատկերը ցուցնել իր վըրայ,
Մարմնացած Աստուած, Աստուծոյ Որդին
Հրաշալի՛ ծնունդ, երկնաւոր Արքայ .

Ինչո՞ւ կրէր ան իրաչին տառապանք,
Մահուան ցաւերը ան հոգեխուով,
Ու «էլի, էլի»ն ձայնէր տխրավանկ,
Խաչակից ըլլար աւազակներով :

Չէ՛, բան մը չըրաւ անոնց արժանի,
Իրեն համար չէր որ կրեց տանջանք .
Այլ մեր մեղքերը ընկճեցին զԱնի,
Աւթելով Անոր իրաչին տառապանք . . . :

ԽԱՉԻՆ ԱՂԲԻԻՐԸ

ԱՂԲԻԻՐ մը կայ որ կողանոս կը բղխի
Խաչէն ի վար, սիրող սիրտէն Յիսուսեան,
Քիչ է թէև, բայց կը դառնայ մեծ ուղխի,
Սիրոյ ուղխին, ջըրող սիրտեր չոր, խոտան :

Ան աղբիւրը՝ ջուր ու արիւն կը հոսի,
Զի նշանակ է արդէն ջուրն մաքրութեան .
Իսկ արիւնը մեղաւորին կը խօսի
Աւետիսը՝ Բաւութեան մը յաւիտեան :

Բեթհեզդայինն չէ ան աղբիւրն որ մի հեղ
Բոլոր տարին յուզէ ջուրերն իր բուժող,
Կամ Սելովամն որ կոյր աչքին ըլլայ դեղ
Երբ Փրկիչ մը ըլլայ օգտելն իր ուզող :

Միշտ կը յուզուի Սիրոյ Աղբիւրն ան առատ,
Ու միշտ կ'օգտէ ան սիրտերուն մեղաւոր .
Մաքրագործուած ու սրբացած, անարատ
Կ'ընէ իրեն դիմող սիրտերը բոլոր :

Խաչին աղբիւրն, ո՛հ, ի՛նչ վսեմ, ի՛նչ անուշ,
 Իրականը հին աղբիւրին Մովսէսեան.
 Ասկէ մենք Նոր-Իսրայէլներըս խեղճ, անուժ՝
 Խըմելով վեր պիտի երթանք, մերն Քանան:

Հոսէ՛, հոսէ՛, Ո՛վ Դուն Խաչին սուրբ աղբիւր,
 Ահա սիրտըս բերի քեզ որ մաքրուի.
 Սրբէ՛ մեղքերս, յանցանքներըս հազար, բիւր,
 Պաղըչկեցո՛ւր սիրտըս խանձած, ծարաւի...:

1903



Խ Ա Չ Ի Ն Ե Ր Գ Ը

Վ.Ե.Ր. Ս. ՄԵԼՔՈՆԵԱՆԻՆ

ՊՈՂԳՈՓԱՅԻ վարդակարմիր սարէն վար
 Երգ մը կուգայ, երգ մը թրթուռն, ներդաշնակ,
 Որ վանկերով արագասլաց, սրբավար,
 Կը տարածուի զեփիւռի մը հանգունակ.
 Ու սիրտերու կուտայ ըսփոփ, խնդութիւն,
 Առհաւատչեան երջանկութիւն մը անհուն
 Խաչին երգը...:

Չի նմանիր ան երգերուն յաղթական,
 Չորս երգեցին մեծ յաղթողներն աշխարհի,
 Իր մէջ խռովքի սարսուտ շեշտեր ընա՛ւ չի կան,
 Ո՛չ ալ թմբկի, մարտահրաւէր շեփորի.
 Անուշ է ան, հոգիներուն մեր խօսող,
 Կը խաղաղցնէ մեր սիրտերը միշտ խըռով,
 Խաչին երգը...:

Հըրեշտակներ կ'երգեն երգը այս անուշ,
 Փրկչին մահուան յիշատակը տօնելու.
 Կը հրաւիրեն մարդկութիւնն ալ հէք, անուժ
 Այս երկնաւոր երգին մտիկ ընելու.
 Չի իր մահով Յիսուս մեզի կեանք բերաւ,
 Որ մենք ալ հոս երգենք ան քաղցր, հոգեգրաւ
 Խաչին երգը...:

Ալ Լուսին Դաւթեան քնարներ, տաւիղներ,
Մովսիսական հին երգերը փառաւոր,
Ալ Ղեւտական փողը երբէք չի հնչեր,
Լուսին ալ հին երգերը դարաւոր.
Բայց մի՛ միայն նոր երգ մը կայ փրկութեան՝
Որ զայն կ'երգեն փրկուածներ յաւիտեան
 Խաչին երգը... :

Երգէ՛, երգէ՛, ով դուն քրնար Խաչալար,
Թող քու երգեր մեր հոգիներ ըսփոփեն.
Քու շեշտերուն հասած տեղ ընա՛ւ ցաւ չըլլար,
Մեզ կը փրկես մեզ քերու ժանտ տագնապէն.
Երգէ՛, երգէ՛ ո՛վ դուն քրնար փափկաձայն,
Ան երգերու երգը երգէ՛ մի՛ միայն
 Խաչին երգը... :

1904



Խ Ա Չ Ի Դ Տ Ա Կ

Ելլա՛ փարիմ Յիսո՛ւս. Խաչիդ պատուական,
Խաչիդ կարմըրած արիւնովդ անգին,
Լրսէ՛ իմ Յիսուս, կոչերս ցաւագին,
Որոնք հոգիիս խորերէն կուզան :

Քանանացի ան կընկան ոգիով,
Կոորած սիրտով կը մօտենամ Քեզի,
Չէ՞ որ Քու անհուն սէրը կը յուզի
Անոնց որ յոյսով կուզան Քուկին քով :

Մաքսաւորն եմ ես, քաւէ՛ իմ բոլոր
Անօրէնութիւնս ու մեղքերս զազիր,
Ո՛հ, ի՛նչ պըժգալի է կեանքս բասիր,
Սրբէ՛, զայն Յիսո՛ւս, չնորհքներովդ նոր :

Ես չնորհքի տանդ Անառակ Որդին,
Փուճ տեղ վատնեցի քանքարներս բոլոր,
Խաբուած աշխարհքէս, ինկա՛ծ, վիրաւոր,
Քեզ կուզամ Յիսո՛ւս, գրկէ՛ զիս կրկին :

Իննսուն ինը հանգիստ են Քու քով
Ես մոլորական Մեկն եմ ո՛վ Յիսուս,

Չէ՞ որ խոտացար զիս առնել Բու ուս .
Ու սուրբ փարախըդ տանիլ հաճոյքով :

Ո՛հ... Յիսո՛ւս, զիտե՛մ հեռու եմ քեզմէ ,
Հեռացած սիրտով , միտքով , հոգիով .
Խաչի՛դ տակ բերի անա սիրտս վրդով ,
Հոն «ես»ս այրելու նոր խորան կազմէ՛ . . . :

Խաչի՛դ տակ Փրկի՛չ , Խաչի՛դ տակ միայն ,
Կը յուսամ գտնել սոսկ երջանկութիւն .
Խաչի՛դ տակ ուր միշտ յածի սէրդ անհուն
Տո՛ւր Փրկիչ Յիսուս , ինծի ապաստան . . . :



Խ Ա Չ Է Ն Չ Ա Յ Ն Ե Ր

ԲԲՕՖ. Ս. Վ. ՔԻՒՓԷԼԵԱՆԻՆ

Ա.

«Հա՛յր, բող դոցա, զի ոչ գիտեմ
զիևչ գործեմ.»

Դ. - Կ. ԻԳ. 34.

Անո՛ս՝ որոնք լկումներով չարաչար ,
Անտանելի նախատինքներ կ'ընեն Բեզ
Ծակծրկելով սիրտըդ արդէն վշտակէզ .
Յիսո՛ւս , ա՛յս է Բու վճիւր անաչաւ . . . :

Անոնց՝ որոնք Բեզ իբրև չար աւազակ
է՛ն գէշ մահուան , Խաչի մահուան յանձնեցին ,
Խոցտեղով սուրբ մարմինըդ կուսածին ,
Ա՛յս է Բուկին վերջին կամքը բացարձակ :

Գութի այս ի՛նչ վերաբերում սրտազրաւ ,
Հըրաչքներու հըրաչքն է այս ո՛վ Տէր ,
Զոր չեն տեսներ ան հոգիով կոյրեր դեռ ,
Ան մեղքի չար մըշակները անիրաւ :

«Հայր թող դոցա»ն եղաւ խօսքըդ առաջին ,
Տառապանքի այդ դժպընի Խաչէ՛դ վար ,


«Զի ոչ գիտեն զինչ գործեն»ն ալ իբր պատճառ
Կուտաս ս'վ Դու Սաբեկայ զո՞ն սուրբ Խաչին :

Դատողներուդ Դո՞ւն մահապարտ փաստարան ,
— Հակասութիւն մը սուրբ , վըսեմ ու անճառ ,
«Վա՛շ , վա՛շ» կարդան խաչողներըդ մինչդեռ չար ,
Դուն Սիրոյ Դատդ յառաջ տանիս անխափան :

Մեծ է Սիրտըդ , մեծ է սէրըդ , մեծ ես Դուն ,
Ներողութեան գանձն ես միակ անըստառ ,
Հէք մարդկութիւնն Բեզմով հարուստ է խապառ .
Դո՞ւն Աստուած ես ու Փրկիչ մեր ամէնուն :

Ե՛ս ալ , գիտեմ , Գու մեծ սիրտըդ խաչեցի
Յար գիտակից մեղքերուս բիրտ խաչերով .
Արդ Բեզ կուգամ , մի՛ զլանար ինձ գորով ,
Բարեխօսէ՛ Հօրդ որ յանցանքս ինձ ներուի . . . :

1904



Բ

«Ամեն ամեն անեմ քեզ , այսօր
ընդ իս իցես ի Դրախտին .»
Ղ. — 4. ԻԳ. 43.

Քի՞ջ էր Յիսո՛ւս , Նախատանքը ռամիկին
Որ խաչակիցդ ալ լուտանքներ կը տեղար ,
Անխօս որով , Գառն Աստուծոյ , ի՞նչ եղար .
Աշխարհք Բեզ գէմ միացած է անմեկին :

Բայց ի՞նչ զարմանք , Դուն բարեխօս մարդկութեան ,
Փաստարան մը կ'ունենաս գող խաչակցէդ .
Թող այդչափ վատ սիրտերու մէջ սիրտ մը գէթ
Յաւակցի Բեզ , օրհնեա՛լ անուն յաւիտեան :

«Յիչեա զիս Տէր» այս սրտաբուլիս կոչը Գու
Խաչուած սիրտէդ բացաւ սիրոյ յորդ աղբիւր .
Ուր սրբուեցան շա՛տ ինկածներ , գողեր բիւր ,
Գրկեց զանոնք խաչուած թեւերըդ հուժկու :


Այո՛ , օր մը պիտի գաս Դուն փառքերով ,
Արքայութիւնդ պիտ' ծաւալի տարածուն .
Ու սուրբ Խաչիդ երկրպագողներս ցնծուն
Պիտի գանի գիմաւորենք անխրոտով :

Խոստումը սուրբ թէ «այսօր ընդ իս իցես»
 'Ի Դրախտին» աւազակին խեղճ հոգին
 Լեցուց շնորհքի զգացումով կաթողին .
 Փրկուած էր ան հէք հոգին վշտակէզ . . . :

Այդ մոլեռանդ ազգակիցներդ չի կրցան
 Գոնէ գրթոտ աւազակին չափ ըլլալ ,
 Ու իրենց չար , սեւցած սիրտեր անայլայլ ,
 Ձի զգածուեցան սուրբ խոստումէդ սիրածայն :

Ինչ են յաճախ մեր սիրտեր ալ երկրամէտ ,
 Եթէ ոչ գողն շքնորհքներուդ երկնառաք ,
 Տո՛ւր որ ով Տէր , իբր զՂացած աւազակ
 Լսենք Խաչիդ սուրբ խոստումը սիրաւէտ . . . :

1904



Գ.

« . . . Կի՛ն դու, սեւա որդի քո . . . ,
 Ահա մայր քո . . . »

Յ-Վ. ԺԹ. 26.

Դուր որ Սինայի սուրբ տախտակներուն
 Վրայ գրեցիր այն մեծ պատուիրան ,
 Պատուելու համար ծընողքներ յարգուն ,
 Ինչպէ՛ս չի խորհիս վըրայ Քու մօրկան :

«Ահա որդի քո , կի՛ն դու» գոչեցիր
 Մոռցած պահ մը Քու ցաւերը ճնշող .
 Ծնողասէր սիրտիդ գորովը անծիր ,
 Պահ մը պարուրեց զէմքըդ լուսաշող . . . :

Սուրբ մօրըդ Քու տեղ որդի մը պէտք էր ,
 Ըստիկելու իր սիրտը ցաւատանջ ,
 — Մայրենի սիրոյն անձկալի՛ պատկեր —
 Որ կը շողշողայ յար լուսաճաճանչ :

Այն ատեն կեցած առջեւը Խաչին ,
 Մայրիկդ արցունքներ թափէր դառնազին .


Մինչ սիրելիդ ալ սուրբ կամքըդ վերջին
կ'ընէր փոփելով մայրիկիդ հոգին :

Զի այն այլեւս իր մայրիկն էր եղած ,
Ու կը սիրէր զայն սուրբ , վրսեմ սիրով ,
Որով դուն գինքը միշտ էիր սիրած .
Պարտքն էր ան սիրտին իր սիրագորով :

Ո՛վ որդիական սիրոյ օրինակ ,
Մ.յնքան պաշտելի , ա'յնքան պերճախօս ,
Ո՛վ հոգածութիւն սուրբ չընորհունակ ,
Քեզմէ աւելի ի՞նչ ըստփանսու . . . :

Մօր սիրտը վրսեմ քերթուածն երկինքին ,
Իսկ որդիականն՝ սուրբ ծնունդն անոր ,
Տուր որ ի՛մն Յիսուս մօրքս սիրան անգին
Պաշտեմ Քեզի պէս ես ալ ամէն օր . . . :

1904



Գ.

«Էլի, ելի, շուն՞ սապաքանի.
(Ասուած իմ, Ասուած իմ, ըն-
դե՞ր քողեր զիս:)»

Մ-դ. ԻԷ. 46.

Ե-դ. ԺԵ. 34.

«**Ե**ՆԻ, ԷՆԻ»ն, այն տագնապի կոչերուն ,
է՛ն սրտայոյզն , հոգիներուն մեր խօսող ,
Փրթաւ սիրտէդ որ մեր սիրով էր ջեռուն ,
Երբ վերջացան երեք ժամեր մթասքօղ :

Ու ան կուրցած խաժամուժը՝ անգիտակ
Թէ ինչու էր աղաչանքի այդ բարբառ ,
Եւ թէ ինչեր կ'անցնէին սուրբ կուրծքիդ տակ .
Քեզ ծաղրելու ցոյցեր կ'ընէր խօլաբար :

Մինչ ոմանք ալ կ'ըսէին թէ Եղիան
կը կանչես որ , գայ ու փրկէ Քեզ խաչէն .
Կ'արատարան ալ որ ըսպունգով քացախ տան ,
Չար դիտումով որ քիչ մ'աւելի տանջեն :

Չէ՛, չէ՛, Յիսուս, Եղիան Գե՛ղ կարօտ է,
Դո՛ւն զօրքերու Աստուածըն ես յաւիտեան.
Բայց մարդկութեան մեղքի բեռը կը զրդէ
Քեզ որ գոչեա «եղի, եղի»ն ողբաձայն:

Կաղաչես Հօրդ որ գըթայ ալ մեղ համար,
Ու վերջացնէ այս փրկութեան գերրդ մեծ.
Զի այսպէսով պիտի փրկուին անհամար
Խեղճ հոգիներ մեղսաչարչար, ախրանե՛ծ . . . :

Մարդկայնութիւնն էր որ պահ մը դէմքըդ լոյս
Անպել փորձեց, բայց կարելի՞ է որ Դո՛ւն
Մընաս լքուած, անարգուած ու անյոյս,
Դո՛ւն փրկութեան միակ յոյսը հէք մարդուն:

Ե՛ս ալ յաճախ «եղի, եղի»ն այդ թաղծուն
Երբ կը փորձեմ երգել սիրտով ցաւատանջ.
Օրինակըդ այդ յուսատու, սէրդ անհուն,
Հոգիիս մէջ կը ծաթեցնեն Յոյս-ճաճանջ . . . :

1904



Ե

«Ծարաւի եմ»

Յ-Կ ԺԹ. 28.

Ո՛վ կեանքի աղբիւր, Դո՛ւն որ համարձակ,
Տաճարին հակայ կամարներուն տակ
Ըսիր՝ կենդանի ջուրն ես յորդաւատ,
Պապակներ մարող, մաքրող անարատ:

Ան Սամարացի կնկան յայտնեցիր
Վե՛հ, հոգեզուարճ սարգեւդ երկնաձիր.
Թէ պէտք էր խըմել ջուրեդ կենսաւէտ,
Որ չի ծարուեր բնու՛ւ, առ յաւէտ:

Քեզ հաւատացող բոլորին համար
Վսեմ խոստումներ բրիր անհամար,
Ըսիր նաև թէ կենդանի ջուրի
Յորդ գետեր պիտի ներսերնէն բղխի:

Բայց զարմանք, Յիսուս, հիմա Դո՛ւն այսպէս
Կը կանչես ձայնով տխուր աղեկէդ
Թէ «ծարաւի եմ», ի՛նչ խորհուրդ է աս . . . ,
Ի՞նչ հակասութիւն անքրննին, անհաս . . . :

Ո՛հ, ծարաւի ես գիտեմ, իմն Յիսո՛ւս,
Մեր փրկութեանը, ս՛հ, մեր ամէնուս.
Ու այդ ծարաւը հոգիդ կը տապկէ,
Ի՞նչ հոգ թէ Բեզի ամբարիշտ ձեռքէ

Կը մատուակուի քացախ որ խըմես,
Մինչ հոգիներու Դուն ծարաւի մ'ես.
Չէ՛, այդ ծարաւըդ Յիսո՛ւս, չի մարիր
Երբ չի կործանես ոտիդ անյարիր:

Սիրտըս ալ մէջը մեղքի կըրակին
Ո՛հ, կը բորբոքի յար տառապագին...
Քու սուրբ ծարաւիդ ես ծարաւին եմ,
Հոգիս ձեռքերուդ մէջը կը դընեմ...:

1904



2

«Անկեայն ինչ կ'սարեայ է:»
Յ=Է. ԺԹ. 30.

ԿԱՏԱՐՈՒԵՅԱՆ Խորհուրդը մեծ
Քաւութեան ու ալ յաւիտեան
Մարդկութիւնը հէք, տխրահեծ,
Թող այս յոյսով բերկրի համայն:

Կատարուեցան այսօր չարին
Մեծ պարտութիւնն, որով մարդիկ
Եղջիւրներուն Սիրոյ փարին
Պիտի սիրտով մը հանդարտիկ...:

Կատարուեցան խոստումը մեծ,
Որ դրախտին մէջ նախամօր
Եղած էր, զի վերակազմեց
Տէրը իրեն Իսրայէլ նոր:

Կատարուեցան ու ալ չիկան
Ձոհ, ողջակէզ, որոնք նորին
Պահ մ'օրինակին, ստուերն եղան,
Այլեւս խորհուրդն ունինք խորին...:

Կատարուեցա՛ւ ալ Ուխտը Հին ,
Մենք Նոր Ուխտին որդիներ նոր ,
Ալ չենք ծառայ ամենեւին ,
Ժառանգ միայն տանն երկնաւոր :

Կատարուեցա՛ւ Գողգոթայի
Մէր-պատարազն աշխարհալուր ,
Ալ սուրբ խաչին պիտի նայի
Ամէն հոգի ընկճուած , տխուր . . . :

«Ամենայն ինչ կատարեալ է»
Սոսկ ե՛ս մընամ յար անկատար ,
Յիսո՛ւս բեկուն սիրտըս հալէ՛ ,
Վերածեւէ՛ զայն սուրբ , արդա՛ր . . . :

1904



է

«Հայր, ի ձեռս քո առանց՛ւմ
զհոգի իմ . . . :»

Ղ. Է. ԻԳ. 46.

Ա ՀԱ իններորդ ժամն հասաւ Յիսո՛ւս ,
Մեծ ժամը որուն համար երկնաւոր
Փառքերդ մերկացած աշխարհ եկար որ ,
Երկինքը բերես մեզի , ամէնուս :

Դո՛ւն հըզօր Փրկիչ գլուխըդ փըշապատ
Ծըռէ՛ ալ խաչիդ կոշտ բարձին վըրայ .
Զի փուշ-պրսակովդ սոսկ պիտի ըլլայ
Սիրոյ Եղեմ մը աշխարհս անապատ :

Ինչպէս որ Մովսէս մէջ անապատին
Պղինձէ օձը բարձրացուց ի վեր ,
Բարձրացար Դո՛ւն ալ հեզ , սիրանուէր ,
Որ այս երկրաքարչ մարդիկ ազատին :

Մեռար Մարդ-Աստուած , բայց որո՛նց համար ,
—Մենց որ ձեռքերդ կոշտ գամեցին ,
Ու ծակձրկեցին մարմինդ կուսածին .
Ով դու սիրտ մարդուն ամբարիշտ , յամառ . . . :

Ճշմարտութիւնը կը մեռնի՞ միթէ ,
 Կը թաղուի՞ լոյսը մէջ գերեզմանին .
 Ձի մեծ է սէրը անճառ , անքննին ,
 Թէև զաջն աշխարհս յաճախ կ'անգլխէ :

Ու անա Յիսուս կ'աւանդէ հոգին ,
 Ձեռքը իր Հօրը , ձեռքը որ չինեց
 Այս ըսքանչելի օրեղերքը մեծ ,
 Ալ «խաչի ճառը» պրտակ մեր փառքին :

Տո՛ւր որ իմս Յիսուս , երբ մահուան ձորէն
 Կ'անցնիմ կուրծք տալով չար փորձիչին դէմ ,
 Ես ալ խեղճ հոգիս ձեռքերդ աւանդեմ .
 Սուրբերուն պէս որ Քեզ փառաւորեն . . . :



Խ Ա Չ Ե Լ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

(Պատկերին առջև)

ՏԱՐԱՄԷ՛ Յիսուս , թեւերդ պարտասուն ,
 Որ հանուր աշխարհ տեսնէ թէ կրնաս
 Գրկել ինկածներն սիրովըդ անհաս ,
 Տալ հանգիստ բոլոր խեղճ հոգիներուն :

«Ձի լուծըդ քաղցր է բեռըդ փոքրոգի» ,
 Ու Քու Մեծ Սիրտին մեծ բաղձանքն է որ
 Քեզ գան յոգնածներ , ընկճուածներ բոլոր .
 Եւ փրկուի ան որ կը փափագի :

Ո՛հ , ի՞նչպէս ոտքերդ գամուած կը մնան ,
 Ոտքերըդ վազող հոն ուր գործ մը կայ .
 Ասոր նոյն իսկ Քեզ խաչողներ վըկայ ,
 Ու Պաղեստինի հիւանդներ համայն :

Ալ չի՞ արօրիեր այս սուրբ սիրտը մեծ ,
 Ուր տեղ կայ նոյն իսկ ինծի համար ալ ,
 Ես որ խաւարի որդի մ'եմ մուայլ .
 Սիրտդ , ուր սըլաքը Սելովամ կազմեց :

Գլուխըդ աննրման, վարսերդ խնկելի,
Աչերդ արցունքոտ, ճակատդ լուսափայլ,
Խնչպէ՞ս է ծածկեր մահուան ցոլրտ մուսլ.
Քանի կը տեսնեմ սիրտըս կը հալի . . . :

Ու այդ լոյս երեսդ փուշէ պըսակին
Հանած արիւնին կարմիրով ներկուած.
Խնչպէ՞ս գունատ է Յիսո՛ւս, աչերդ բա՛ց,
Գոնէ արցունքովդ զայն լուս՛ կրկին . . . :

Համբո՛յր ոտքերուդ երկըրպագելի,
Համբո՛յր ձեռքերուդ մեր ցաւեր բուժող,
Համբո՛յր արիւնոտ ճակտիդ լուսաշող.
Համբոյր՝ որուն մէջ թող կեանքըս հալի . . . :

1904



“ Պ Ա Ր Գ Ե Ի Ա Տ Ո Ւ Ն ” Ը

(Ա.Ե.Խ. հաղաշափուած)

ՏԻԱՐ Յ. Գ. ՄՐԱՐԵԱՆԻ

ՊԻՂԱՏՈՒՔՆ պարգեւի պէս կը խնդրուի,
Այսօր, Այն որ պարգեւատուն է ամէնուն,
Ու Յովսէփէն հաճի դրուիլ մէջ պատանքի,
Այն որ հազած է լոյսն իբրև իր վերարկուն :

Այսօր՝ մի նոր գերեզմանի մէջ կը դրուի,
Այն որ կուտայ կենդանութիւն մեր ամէնուն,
Քահանաներուն կրնիքով կը կրնքուի
Անմահութեան գանձարանը ճոխ ու անուն :

Այսօր՝ դրուի քար շիրմի մը մէջ նորափոր,
Քըրխտոս որ Փրկիչն է արարածներուն,
Ու զԱյն որ միշտ կ'օրհնեն երկնի գօրքեր բոլոր,
Կը պահպանեն զինուորներուն խումբը անբուն :

Քըրխտոս որ կենդանի է միշտ, յաւիտեան,
Պիղատոսէն իբր մեռած մարդ այսօր կ'ուզուի,
Այն որ ծածկոյթ եղաւ Ադամի մերկութեան,
Կը հաճի որ փաթթէ Յովսէփի զինք պատանքի :

Քրքիստոս որ անմահութիւն կուտայ մեզի,
Կը զիջանի այսօր իջնել մահուան հողը.
Այն որ բնակի լոյսերուն մէջ անմատչելի,
Երկրի սիրտին մէջ կը թաղուի մարմինովը:

Քրքիստոս որ արեւըն է արդարութեան,
Խաւարային գուբի այսօր դրուեցաւ մէջ.
Երկրին մէջտեղ ծածկուեցաւ քարերով այն,
Հօր Աստուծոյ ճառագայթը փառքին անշէջ:

Այսօր՝ Քրքիստոս կոյս շիրմի մը մէջ կը թաղուի,
Այն որ կոյսէն մեզի համար առաւ մարմին.
Քահանաներուն կրնիքով կը կրնիքուի,
Այն որ ջնջեց մեր երկունքը դժոխային:

Կը քնանայ մարդերու մէջ մահկանացու,
Արարիչը ամենատես, բնութեամբ արթուն,
Զինուորները կը պահպանեն զայն հողածու,
Որ կը հսկէ Իսրայէլին վըրայ անքուն:

Այն սգակիր Եստուր կիներ այսօր կուլան,
Քրքիստոսի վրայ, որ ուրախութիւն է ամէնուն,
Ու այն ըզգաստ իւզաբներ կը խնկեն զԱյն,
Որ անսպառ կը բուրէ յար անմահութիւն:

1904



Գ Ո Ղ Գ Ո թ Ա Ն

ԳՈՂԳՈԹԱՆ է հողիներուն նոր քաւարան,
Ու Դուն անոր պատարագող մեծ Քահանան:
Գողգոթան է այս նոր Ուխտին սիրոյ տաճար,
Ուր մեզ տուիր «նոր պատուիրան» վսեմ, անճան:
Գողգոթան է կանխաձայնուած նոր Մօրիան,
Ու Դո՛ւն անոր Իսահակը հըլու անքան:
Գողգոթան է նոր կոչունքը աշխարհալուր,
Ու Դո՛ւն անոր պարարտ հորթը հեղահամբոյր:
Գողգոթան է շնորհքի աղբիւրն առատահոս,
Ու Դո՛ւն այնտեղ հողիներուն մեր բարեխօս . . . :

* * *

Խաչապըսակ Գողգոթային
Դերբուկներէն վեր կը փութամ,
Ներէ՛ Յիսո՛ւս, մեղքերըս հին,
Թեւերուդ տակ որդեկընամ:

Խաչապըսակ Գողգոթային
Կողահոս նոր աւազանին
Կուգամ — հիւանդ բոլորովին —
Յիսո՛ւս, ցաւերս թող բժշկուին:

Խաչապըսակ Գողգոթային
Զոհարանին կը մտնեամ,
Գուն որ Զոհն ես սուրբ, երկնային,
Մեծ քառթեանդ ըլլամ արժան :

Խաչապըսակ Գողգոթային
Արինաներկ խաչին կռթնած,
Լացող աչերս քեզ կը նային,
Ալ լսէ՛ իմ խոնարհ հայցումս :

Յիսո՛ւս, սուր որ սուրբ Գողգոթան,
Երկինքն ըլլայ իմ լուսապերճ .
Մեռնի մէջիս մեղքի Յուդան,
Ու վայելիմ փառքերդ անվերջ . . . :

1904



ԳՈՂԳՈԹԱՅԻ ԿՏԱԿԸ

Յովհ. ժԳ. 34.

ՄԲ. Հ. ԽՄԷՐԻՆ

ԳՈՂԳՈԹԱՅԻ կտակը միշտ դարէ դար,
Խաչափայտէն կ'արձագանդէ անդադար
Որուն չ'ուզեր մարդկութիւնը սալ ականջ,
Մարդկութիւնը վշտաչարչար, ցաւատանջ :


Գողգոթայի կտակը սուրբ կրկնէ յար,
Թէ դուք մարդիկ յաւէա «Սիրեցէք իրար» ,
Արդարութեան սէրը սոսկ ձեզ պիտի տայ
Երանաւէտ ու երջանիկ ապագայ :

Գողգոթայի կտակին ե՞րբ պիտի մենք
Իբրեւ միակ ապաստանը մեր զիմենք .
Առանց անոր ս՛հ, մեզ անդորր չիկայ որ,
Պիտի շատնան խեղճութիւններ նորանոր :

Գողգոթայի կրտակը սոսկ վար բերաւ
Սիրոյ օրէնքն, գլխովիւնը սրտագրաւ,
Որոնց ներքեւ քրիստոնեան պիտի մըշտ
Կեանք վայելէ բարի, խաղաղ ու անվիշտ:

Գողգոթայի կտակին տուր որ ս'լ Տէր
Գերին ըլլամ, որով խառնված շատ սիրտեր
Քու սուրբ սիրոյդ բերել ըլլայ ինձ հընար,
Ո՛հ, ըլլար որ սիրա մ'անկէ զուրկ չի մնար...:

1904



Տ Ա Ր Ո Ի Բ Ե Ր Ո Ի Մ Ն Ե Ր

II.

ՏԻԱՐ Ս. ՅԱԿՈԲԱՆՆԻՆ

ՇԱՏ անգամներ սիրաբն նիւթի սիրահար,
Սչխարհային ծուղակներու ինկած մէջ,
Մինչ անոնցմէ պրծիլ ըլլայ ջանահար՝
Աւ աւելի կը կաշկանդուի, կ'ըլլայ խեղճ:

Այն մեղքերու գառնայ վիրապ մ'օձալից,
Որուն մէջը փակուած «ես»ըս կը հիւծի,
Արցունքս ինձ հաց ու բաժինքս ցաւ, կակիծ,
Կը թառամին բարի սէրերս խաւարծի...:

Ո՛հ, չարաղէտ անկումներուս այս խայթեր
Կը ծակծրկեն սիրտս փուչերու առած մէջ,
Ու կը կարծեմ բարի սիրտի մ'ըլլալ տէր

Չէ կարելի: Սև խորհուրդներ յար անվերջ
Կը մթագնեն հորիզոնը յոյսերու,
Երջանկութիւնն փախած ինձմէ շա՛տ հեռու...:



ԲԱՅՅ շատ անգամ՝ ալ լոյս մը երկնային
 Կը ծագի սիրտիս բերելով կեանք նոր,
 Այ մուցած աշխարհ, հրապոյրներն անոր,
 Աչերս երկինքի փառքին կը նային:

Կ'անցնին սև ամպեր, սիրտս կը զարդարեն
 Երկինք մը աստղեր ժպտուն յոյսերու,
 Կը դադրի բոլոր խռովքը յոյգերու.
 Մխիթարուած եմ ալ անհունօրէն...:

Նոր մարդ մը կ'ըլլամ, նոր որոշումներ,
 Նոր, նոր կարօտներ թե կ'առնեն սիրաէս.
 Բարի փափաքներս չեմ ըներ անտես:

Մէջըս վրդովում, խայթեր չեմ գտներ:
 Հրեշտակ մ'եմ մարմնով երկինք տենջացող.
 Սիրտըս երկինք մ'է արդէն լուսաշող...:

ՊԱՅԲԱՐԻՆ մէջ այսպէս չարին, բարին,
 Տարուբերումներ կ'ունենամ հոգեկան,
 Մինչդեռ մահու պտուղներ ցոյց տայ մարդը հին,
 Նորին կ'այրիմ կարօտովը մշտական:

Ո՛հ, իմն Յիսո՛ւս, հերիք տարտամ, անկայուն,
 Այս վիճակով ալէկոծուիմ չարաչար.
 Այ յուզուի թող սէրը Բու սուրբ ու անհուն,
 Սոսկ Դուն կրնաս գտնել ասոր հնարն ու ճար:

Ոտքերս ուղղէ՛ շիտակ ճամբուն անսայթաք,
 Չեռքերս Բու սուրբ օրէնքներուդ բեւեռէ՛,
 Ականջներս ալ խոստումներուդ սիրատաք.

Փրկէ՛ հողիս վաղահաս, դառն ցաւերէ.
 Որդիութեան հագցո՛ւր ըզգեստն առաջին,
 Կապէ՛ սիրտըս արիւնաներկ Բու իյային...:



Տ ՈՐ Ի Ր

ԿԵՆԱՆՔԻՍ օրերը Բուկղ ըլլան Յիսուս,
Թէև անոնք Բու պարզեւդ են ճրբի.
Բուկղ հոգիս ամբողջ, սիրտըս լիայոյս,
Եթէ Բուկինըդ Բեզ սալ յարմարի:

Ա.ս, ինչ որ իբրեւ առժամանակեայ
Քանքարներ ինձի շնորհեցիր վերէն,
Ա.ս բոլոր բարիքներն ալ ապագայ,
Գոհ պիտի ըլլամ ես անհունօրէն:

Ու մերկացուր զիս ոսկիէս, փառքէս,
Ինչ որ ակնառու ձիրք վըրաս ունիմ,
Թէ կամիս բոլոր ատոնք ա՛ն ձեռքէս,

Ձի շնորհքներու զանձըս ես Դուն իմ:
Բայց խնդիրք մը լոկ ունի սիրտս թափուր,
— Բու բեղուն կեանքէդ ըսպէ մ'ինձի սուր...:

1904

Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԻՐԱՄԱՐԳԻ փեսուքներով շողջողուն
Չարդարուած է արտաքինըս խաբուսիկ,
Որուն պատրուկ հրապոյրները գեղեցիկ,
Դիտողներըս ամբողջ ապշած կը թողուն:

Ու շատ անգամ կեղծիք մըն եմ ես ինձի,
Կեղծիքներու է՛ն գուհիկը, ծաղրելին,
Կը մրտեմ խիղճիս յստակ հայելին,
Որ չի տեսնեմ հետքեր մեղքի ու բիծի:

Գիտակից եմ այս եղկելի վիճակիս,
Վիճակ մ'որուն անդորութիւնը սուտ է,
Խիղճիս խայթը օրէ օր սիրտըս կ'ուտէ:

Այս չպարով գեղեցկացած խեղճ հոգիս,
Խստուկանանք-մերկացումով Բեզ կուգայ,
Ալ տո՛ւր իրեն խաղաղութիւնդ մշտակայ...:

1904



Ծ Ա Ր ԱՐ Ի Ի

Սաղմ. ԽԲ. 1—3.

ԵՂՋԵՐՈՒՆ Խնչպէս ջուրի վտակներուն՝
 Անանկ ալ անձրս Քեզ կը փափաքի,
 Քու ողորմութեանդ, չնորճքներուդ անհուն,
 Ալ հերիք հոգիս, սիրտըս պապակի:

Ե՞րբ պիտի արդեօք Քու առջևըդ գամ,
 Քու՝ որ կենդանի Ատուածս ես իմին,
 Թափել ոտքերուդ սիրտս յօժարակամ,
 Որուն տենջանքով կայրի՛ իմ հոգին:

Հերիք արցունքներս ինձի հաց եղան,
 Հերիք ամբարիշտ լեզուներ վըրաս
 Արհամարհանքի կարկուտներ տեղան:

Դուն, Դո՛ւն փրկութիւն ինձի տալ կրնաս,
 Ու անոր համար հոգիս յիրաւի,
 Քեզի ո՛վ Ատուած, Քեզ է ծարաւի:

1904



Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԲՆՈՒԹԻՒՆԸ ունի յարութիւնը իր,
 Որով նորահրաշ կը զարգարուի պերճ,
 Իր հրապոյրներու շարքերով անվերջ,
 Այնքան հմայքոտ, ա՛յնքան կենսալիր:

Դուն ալ Ո՛վ Յիսուս, որ Քեզմով եղան
 Աշխարհներ, անոնց պերճանքները բիւր.
 Դո՛ւն գեղեցկութեան ու կեանքի աղբիւր,
 Դուն ալ Յարութիւն առիւր յաղթական:

Միթէ կարելի չէ՞ ինձի աւնել
 Այն Յարութիւնը որուն կարօտով
 Սիրտս է անհանգիստ ու հոգիս վրդով:

Միթէ մեղքերու սեւ փոսէն անել
 Աւնել չե՞մ կրնար այսօր Յարութիւն,
 — Այո՛, հաւատքիս Դո՛ւն առբ զօրութիւն . . . :

1904



«ՈՂՈՐՄԷ՛ ԻՆՑԻ»

Սաղմ. Եմ. 1.

ՈՁ, ՈՁ, Աստուած իմ, մի՛ Դուն իմ սիրտին
 Արդարութեանը մի՛ նայիր երբէք,
 Անկէ փրկութիւն յուսալ դժուարին
 Ու անկարելի է այս սիրտին հէք:
 «Ողորմէ՛ ինձի ս'վ Աստուած,
 Քու ողորմութեանդ համեմատ.»
 Դո՛ւն ողորմութեան գանձն ես անքննին:

Մի՛ նայիր երբէք բարի գործերուս,
 Որոնց մէջ մեղքերս են միշտ անպակաս.
 Չէ՛, անոնց վրայ չեմ դըններ իմ յոյս,
 Ինձի փրկութիւն միայն Դո՛ւն կուտաս:
 «Ողորմէ՛ ինձի ս'վ Աստուած,
 Քու ողորմութեանդ համեմատ.»
 Ողորմութիւնդ՝ միշտ փայլող անշէջ լոյս:

Ո՛չ ալ ազօթքիս, ուխտերուս պէս
 Նայիր ս'վ Աստուած, անոնք ալ սրկար
 Ու միշտ անսուրբ են՝ թէ Դուն չի սրբես,

Առջեղ պիղծ սիրտէս սուրբ բան մը չի գար:
 «Ողորմէ՛ ինձի ս'վ Աստուած.
 Քու ողորմութեանդ համեմատ.»
 Ողորմութիւնդ թող ընէ մեղքս անտես:

Վերջապէս մէջքս չիկայ բան մը որ
 Քու ողորմութեանդ ըլլայ արժանի.
 Բարիքներդ անթիւ չընորհք են բոլոր,
 Թող երեսիդ լոյսն վըրաս ծածանի:
 Ողորմէ՛ ինձի ս'վ Աստուած,
 Քու ողորմութեանդ համեմատ.»
 Ողորմութիւնդ ցող մաքրող, երկնաւոր:

1903





«ԱՍՏՈՒԾՈՅ ԶՈՂԸ ԿՈՏՐԱԾ ՀՈԳԻՆ Է»

Սաղմ. ԾԱ. 17.

ՉՈՒԱՐԱԿՆԵՐՈՒ այրուած զոհեր,
Ու ողջակէզներ գէր ոչխարներու,
Հաճելի ըլլալէ են շատ հեռու:
Եւ Աստուած զանոնք բնաւ չի սիրեր.
«Աստուծոյ զոհը կոտորած հոգին է:»

Բարի գործերու անհատնում շարքեր,
Փառասիրութեան մարմաջով շինուած՝
Չի գնահատեր ու չ'ուզեր Աստուած,
Չի անոնք մարդուն «ես» ին են պատկեր.
«Աստուծոյ զոհը կոտորած հոգին է:»

Օրհներգ մրմնջող մեքենայ շուրթեր,
Որոնք կապ չ'ունին բրնաւ սիրտին հետ,
Ու միշտ կեղծելու կ'ըլլան հակամէտ,
Անոնք Աստուծոյ չեն սիրտը դրդեր.
«Աստուծոյ զոհը կոտորած հոգին է:»

Փարիսեցիի աղօթքը հրպարտ,
Աստուծոյ երբէք չ'ըլլար լսելի.
Բայց մաքսաւորին մաղթանքն ցաւալի,
Կ'արձակէ զինքը սրբուած, անպարտ.
«Աստուծոյ զոհը կոտորած հոգին է:»

Կեղծ արցունք թափող աչեր միշտ լալկան,
Սիրտեր՝ որ սիրել բնաւ չէին ուզեր,
Թէ զիրենք շահու սէրը չի յուզեր.
Աստուած ասոնցմէ կը խորշի անքան,
«Աստուծոյ զոհը կոտորած հոգին է:»

Աստուած լաւ գիտէ մեր շարժառիթներ,
Խորութիւնները անոնց կը չափէ,
Անոնց համեմատ մեր վրայ կը թափէ
Շընորհքները՝ երբ մեզ կեղծ չի գտներ.
«Աստուծոյ զոհը կոտորած հոգին է:»

Ամբարտաւանին Տէքն է հակառակ,
Ու միշտ շընորհքներ կուտայ խոնարհին.
Տնանկին ցաւերն ալ անհրնարին,
Կ'ընդունի իբրև Իրեն պատարագ.
«Աստուծոյ զոհը կոտորած հոգին է:»



Ի Ն Ն Ե Ր Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Բ

Մասք. Ե. 2—12.

Երբ իր բերանը՝ աղբիւր բարութեան՝
Բանալով անոնց կը սորվեցընէր
«Կենաց խօսքեր»ը ու կրթող ա՛յնքան
Կենսատու ու մեծ ճշմարտութիւններ :

«Երանի՛ հողիով աղքատներուն ,
Թէև տառապին զրկումով քանի ,
Քանզի երկինքի թագաւորութիւնն
Անոնց համար է , անոնց պատկանի : »

«Երանի՛ անոնց՝ որ սուգ ունին հոս ,
Տրամութեամբ լցուած կ'ողբան լալազին ,
Մխիթարանքի ցօղովն երկնահոս
Պիտի պաղըկի իրենց հէք հողին : »

«Երանի՛ անոնց՝ որ հեզ են , խոնարհ ,
Հըպարտ ոտքերու առջև պատուանդան .
Իբր ժառանգութիւն պիտ' առնեն զաշխարհ ,
Երկիրս զանձերովն առատ , բազմազան : »

«Երանի՛ անոնց՝ որ են անօթի ,
Ծարաւի նաև յար արդարութեան ,
Անոնց փափաքներ պէտքի կարօտի ,
Պիտի տրուի ու պիտի կշտանան : »

«Երանի՛ անոնց՝ որ են ողորմած ,
Կը սիրեն անանկն ու խեղճը հոգալ ,
Քանզի կեանքի մէջ միշտ իրենց դիմաց
Պիտ' ողորմութիւն զանեն իրենք ալ : »

«Երանի՛ անոնց՝ որ մաքուր սիրտով
Են՝ ու մեղքերու ազատէն սրբուած ,
Քանզի երկնային լոյսով հոգեթով ,
Ներքին աչերով պիտ' տեսնեն զԱստուած : »

«Երանի՛ անոնց՝ որ խաղաղութիւն
Կ'ընեն , կը սիրեն ալ զայն սրտովին ,
Իբր իրենց պատշաճ ու յարմար անուն :
Պիտի Աստուծոյ Որդիներ կոչուին : »

«Երանի՛ անոնց՝ որ հալածուած են
Արդարութեան համար ամէն տուն ,
Թէև աշխարհիս մէջ ողբան , հեծեն ,
Թագաւորութիւնն երկնից պիտ' առնեն : »

«Երանի՛ է ձեզ՝ երբոր նախատեն ,
Ու սուտ տեղ վրանիդ խօսին շատ գէշ խօսք ,
Յնծացէ՛ք , շատ վարձք ունիք այն տուն .
Մարգարէներուն իսկ՝ ըրին ատոնք : »



«ՏԷՐ, ԱՂԷԿ Է ՈՐ ՀՈՍ ԿԵՆԱՆՔ»

Մասք. Ժէ. 4.


«ՏԷՐ, աղէկ է որ հոս կենանք,»
Լոյս-երեսիդ ցոլքերուն տակ,
Հո՞ս անցընենք մերին կարճ կեանք,
Մեղք-ցաւերու յար անգիտակ:

Հո՞ս ընտրենք մեզ բնակարան,
Հոս ուր շնորհքներդ անձառ, անհուն,
Կ'անձրեւեն մեր հոգւոյն վրան,
Լեցնեն պէտքեր մեր ամէնուն:

Հետ երկնային էակներուն
Խօսիլ, ըլլա՛լ ուրախակից,
Գաղտնիքները Փրկչիդ անհուն,
Գիտնա՛լ, ի՞նչ մեծ հաճոյք ամբիծ:

Հետու քաղքին խուլ ժրխորէն,
«ՏԷՐ, աղէկ է որ հոս կենանք,»
Այս իմ բաղձանք սիրտիս խորէն,
Մէխ, թող անդորր անցնի իմ կեանք:

Չէ, բայց գիտեմ վարը գործ կայ
Այս ձեռքերուս, ազտոտ, տրկար,
Հոգիդ ինձի ուղղորդ ըլլայ՝
Որ ըլլամ ես միշտ օգտակար...



«ՀՈԳԻՆ ՅՅԺԱՐ Է՝ ՄԱՐՄԻՆԸ ՏԿԱՐ»

Մասք. ԻԶ. 27.

ԱՅՍ աշխարհ ինձի մութ Գեթսեմանի
Կ'ըլլայ շատ անգամ, լքուած, ցաւազար,
Կը բաղձամ իսկոյն ազօթք-դարմանի,
«Հոգին յօժար է՝ մարմինը տրկար:»

Յաղթել կ'ուզեմ յար այս «ես»ըս հրպարտ,
Ըլլալու սիրտով անկեղծ ու խոնարհ,
Բայց խիղճի ծովըս միշտ է անհանդարտ.
«Հոգին յօժար է՝ մարմինը տրկար:»

Ո՛հ, այս կիրքերս չար, ցիցերն հոգիիս,
Կ'ուզեմ որ ցնդին, անհետին իսպառ,
Բայց մրկող կրակն կայրի ներսիդիս,
«Հոգին յօժար է՝ մարմինը տրկար:»

Կ'ուզեմ որ Խաչին աղբիւրն կողահոս,
Մաքրէ իմ հոգին, մինչ կեանքըս թշուառ:

Հոն կը սրբուի, բայց կ'ազատտի հոս,
«Հողին յօժար է՝ մարմինը տրկար:»

Այս խեղճ կեանքիս մէջ սոսկ խաչդ ինձի յոյս,
Կը փարիմ անոր պատուանդանին յար,
Սիրորս Բեզ կուտամ, Փրկիչ իմ Յիսուս,
«Հողին յօժար է՝ մարմինը տրկար:»

1903



Ք Ո Ւ Կ Ա Մ Ք Դ Ը Լ Լ Ա Յ

Դռկ. ԻԲ. 42.

ՔՐՏԵՄ, կեանքի դառնութիւններ զանազան,
Հողիս վրայ պիտի լեզիներ քամեն,
Պիտի տանիմ բայց անտրտունջ ու անձայն,
Զրկումներըս, տառապանքներըս ամէն.
Քու կամքդ ըլլայ:

Տակն ախտերու անգութ ձեռքին խոշտանգող,
Եթէ հիւծի պիտի մարմինըս ոսին,
Ու Յորի պէս ցանած գլխուս մոխիր, հող,
Վէրքերէս ալ արիւն, թարախ պիտի հոսին.
Քու կամքդ ըլլայ:

Ու զրկուած ըստփանքի խօսքերէն,
Սիրող դէմքի մը ժրպիտին կարօտցած,
Թէ պիտի յար ողբամ դառազինօրէն
Յուսակտուր, մշտամորմոք, վշտայրած,
Քու կամքդ ըլլայ:

Մէկիկ, մէկիկ սիրելիներս թէ անցնին
Պիտի այս մութ տառապանքի հովիտէն,
Թէ այս է Քու կամքը անհաս, անքննին,
Բոլոր սիրտովս յանձնուած եմ Քեզ արդէն,
Քու կամքդ ըլլայ :

Ու վերջապէս մահուան քրտինքն ցոլբոտ, նամէտ,
Թրջէ կուրծքըս տառապանքով ջախջախուած .
Հրաժեշտ տամ անցաւորին այս յաւէտ,
Ուր բոյն են դբած ցաւ, տուայտանք, արցունք, լաց,
Քու կամքդ ըլլայ :

Բայց մի՛ Յիսուս, մի՛ լոյս երեսդ դարձրներ
Ապաշխարող հոգիիս ջերմ կոչերուն,
Թող պըսակուին սիրտիս բոլոր բաղձանքներ,
Որ երկինքին մէջ ալ երգեմ թրթբուռն
Քու կամքդ ըլլայ . . . :

1904



“Տ Է՛ Ր՝ Յ Ի Շ Է՛ Չ Ի Ս”

Լուկ. ԻԳ. 42.

ԵՍ Հին Ուխտին աւագակին յար, նըման,
Մեղքի ճամբէն քալեցի ու քալեցի,
Արդարութեան կայծակն ու շանթը ցատման
Գիտեմ որ ճիշդ գլխուս վըբայ կը յածի,
«Տէր՝ յիշէ՛ զիս :»

Գիտեմ որ Դուն Սաչի մահուան չես արժան,
Ի՞նչ ես ըրեր որ ան պատիժն կըրեցիր,
Ե՛ս, ես միայն սիրտովըս չար ու դաժան
Պէտք է խաչուիմ մեղքերովըս չար, զազիր,
«Տէր՝ յիշէ՛ զիս :»

Քեզ մօտ գիտե՛մ, կան որ գ՛իեզ կ'անարգեն,
Իրենց կըճող ծաղրանքովը սրտաւեր,
Յնոնք որ կեանք, բարիք առին Քու ձեռքէն,
Խաչդ ձգելու Քեզ կը կարդան հըրաւէր,
«Տէր՝ յիշէ՛ զիս :»

Վերջին շունչիդ վե՛ն աղօթքը մ'իջ Յիսուս,
 «Հայր, թող դոցա, զի ոչ զխտեն զինչ գործեն»,
 Յոյս մը ծագեց սիրտիս մէջը մոռթ, անլոյս,
 Յոյսն ներումի՛ր՝ շատ մեծ սիրտիս ուզածէն.
 «Տէ՛ր՝ յիշէ զիս»:

Քեզ խաչակից ԸԼԱԿ կուզեմ Փրկի՛նչ իմ,
 Վերջին ժամուս աչերս Քեզի դարձուցի,
 Թող որ Յիսո՛ւս, սուրբ փէշերուդ ես դպչիմ,
 Դուն որ եղար աւաղակիս դրացի...
 «Տէ՛ր՝ յիշէ զիս»:

Կ'ուզեմ որ զիս յաղթող Խաչիդ պատուական
 Նախախայրիք աւաղակին հետ դասես,
 Եւ Քու քաղցըր բարբառովըդ տիրական
 «Այսօր Դրախտին մէջը ինձ հետ ես» ըսես
 Ու յիշես զիս:

1903



«Յ Ի Ս Ո Ւ Ս Լ Ա Ց Ա Ի»

Յովհ. ԺԱ. 35.

Հ Ո Ք Ի Ս Ղաղարոս մ'է, չորեքօրեայ
 Թաղուած այս մեղքի գերզմանին մէջ,
 Իր դուրս, լոյս-աշխարհք դալուն յոյս չի կայ,
 Եթէ Քու լոյսը չի փայլի անշէջ:

Յիսո՛ւս, կը բանամ քար սիրտըս Քեզի,
 Գլտորած մէկդի քարը արգելքի,
 Թէեւ դեռ մահուան կապը չի խըզի,
 Քեզմով կայ հընար փրկութեան, ելքի:

Չեմ ուզեր թէեւ աչերդ գըթառատ
 Թափեն արցունքի մարգրիտ հատիկներ,
 Բայց առանց ատոնց համակ մեղք, արատ,
 Հողիներ զխտե՛մ, լուացում չեն գտներ:

Եկո՛ւր ու ձայնէ Քուկին տիրական
 Բարբառովըդ զիս դուրս գերեզմանէս,
 Ա՛խ, տեսնել կ'ուզեմ դէմքըդ տիրական,
 Կրնամ եթէ զիս ասկէ դուրս հանես:

Չէ՛, ալ չեմ մոռնար, պիտի յիշեմ յար,
 Որքան ալ կըրեմ տառապանք ու ցաւ,
 Թէ մեծարժէք է այս հողիս թշուառ.
 Զիրեն համար էր որ «Յիսուս լացաւ»:

1903



Հ Ո Գ Ի Ի Ն Տ Ա Ճ Ա Ր Ը

Յովհ. Բ. 14-17.

ՄԱՐՄԻՆԵՍ տրկար տաճարն Հոգիին ,
 Որ նըւիրումով պէտք էր սրբանալ ,
 Ու չընորհքներու ինքզինքը բանալ .
 Լեցուն է իրեն մեղքերովը հին :

Սիրտիս մէջ համակ աշխարհ կը տիրէ ,
 Ոսկին ու «Ես»ը կը պաշտըին հոն ,
 Կիրքերու չաստուածն միշտ կ'ընդունի ձօն ,
 Թէեւ միշտ խաբող , ստապատիր է :

«Քու տունդ աղօթքի տուն կոչուէր պիտի ,
 Աւազակներու այր դարձեր է ան ,»
 Սիրտս պէտք էր ըլլալ Քեզի օթեան ,
 Չար փափաքներու դարձեր է տեղի :

Յիսո՛ւս , նախանձի Քու խարազանին
 Հարուածով մաքրէ սիրտըս մեղսալից ,
 Որ մաքրըւելով ըլլայ սուրբ , ամբի՛ծ ,
 Տաճարն Հոգիին աննիւթ , անքննին :



Ա Ն Հ Ո Ի Ն Ս Է Ր Ը

Հովհ. Ե. 8—9.

Օր. Ե. ՊՐԻԵՐԻՆ

Ո՛չ, ինչ անհուն է Սէրդ Յիսո՛ւս ,
 Չոր ցըցուցիր ինձ պէս տրկար
 Ու մեղաւոր զաւկիդ համար ,
 Սէրդ միայն հէք սրտիկիս յոյս :

Թերեւս արդար մէկուն համար
 Մեռնիլ ուղող մէկը ըլլայ ,
 Կամ գըթացող սիրտ մը որ լայ
 Յաւերուն վրայ ալ անհամար :

Բայց ինձ պէս խեղճ մեղաւորին ,
 Ո՞վ կը հաճի նայի՛լ միայն .
 Սոսկ արիւնդ սուրբ , նըւիրական
 Սրբեց մեղքերն իմ դժուարին :

Թէ՛ երբ մեղքի էի դերին
 Չիս սիրեցիր Սիրովդ անհուն ,
 Երբ սիրտս յանձնեմ Քու ձեռքերուն
 Փրկութիւնս ս'հ , ս'րքան դիւրին :

Անհուն է Սէրդ Փրկի՛չ Յիսուս ,
 Սուրբ արիւնտովդ զըրջմուած ,
 Գրկող թեւերդ ալ մշտաբայ ,
 Քեզ կը բերեմ սրտիկս անյոյս . . . :



Հ Ի Ն Մ Ա Ր Գ Ը

Հոռվմ. 2 6.

ԽԱՉԷ՛ Յիսուս, խաչելութեամբդ մարդըս հին,
Որ իր անթիւ յանցանքները կորսըին,
Ու ալ մեռնիմ մեղքի համար մարմնով ես,
Սիրաս ու հոգիս արդարութեամբդ Դուն թովես:

Խաչիդ վերայ գլուխըս ճիշդ անյտեղ դիր,
Ուր Գուկինըդ փուշ-պըսակով ծըռեցիր,
Թող իմ ալ դէմքս արիւնովըս կարմըրի,
Որ լոյս-պսակն դընէ գլուխըս ձեռքդ բարի:

Ու ձեռքերըս թեւերուն վրայ Գու խաչին,
Գամուած թող մնան ու քիչ մ'այնտեղ թող հանգչին,
Հերիք գործեն մեղքի գործերը աղատտ,
Բարի գործքի թող վարժըին քիչ մը հող:


Պատուանդանին Խաչիդ գամէ՛ ոտքերն իմ,
Որ ուղղութեան ճամբուն մէջ չի գայթակղիմ,
Շատ քալեցի մեղքի ճամբէն ընդարձակ,
Ալ թող քալեմ Գու շաւղիդ մէջ ոտքով ծակ:

Ու նիզակով իմ ալ կողըս ծակի թող,
Աղբիւր դառնայ սիրտս կեանքի ջուր բղխեցնող,
Կողէդ բղխող ջրբախաւքն արիւնով,
Լուս, սրբէ՛ սիրտս մեղսալից ու վրդով:

Մեռնիլ կ'ուզեմ մեղքի համար Յիսուս իմ,
Որ Յարութեամբդ նոր կեանքով մը միշտ ապրիմ,
Խաչէ՛ Յիսուս, խաչելութեամբդ մարդըս հին,
Խաչելութեան կը բաղձամ ես սրտովին...:

1903





Ն Ե Ր Ք Ի Ն Պ Ա Յ Ք Ա Ր Ը

Հոտվմ. է. 24.

ՊԱՅՔԱՐ մը կայ հողիւ մէջ անդադար ,
Սուրբ Պօղոսեան այն պայքարին յար , նրման ,
Որ հողիւ խաղաղութիւն ընաւ չի տար ,
Ոչ ալ գոնէ ժամ մը խինդի , ըստփման ,
«Ի՛նչ խղճալի մարդ եմ ես :»

Երկու օրէնք կը տեսնեմ մէջս՝ իրարու
Բողոքովին հակառակ ու հակոտնեայ ,
Իրարու հետ հաշտ ըլլալէ շատ հեռու ,
Կամքս երկուքին մէջը յոգնած կը մնայ .
«Ի՛նչ խղճալի մարդ եմ ես :»


Մէկը՝ միտքիս օրէնքն է որ կը հաւնի
Աստուածայինն , սուրբը , արդարն ու բարին ,
Միւսը՝ մեղքի օրէնքն է որ հերիւնի
Հարուածներով գերի կ'ընէ զիս չարին .
«Ի՛նչ խղճալի մարդ եմ ես :»

Կ'ընեմ այն զոր չեմ ուզեր ու չեմ սիրեր ,
Եւ ուզածքս ընել յաճախ չեմ կրնար ,
Շուարած եմ , չունիմ տեղ մը աներեր .
Այս անկայուն վիճակիս ի՛նչ կայ հընար .
«Ի՛նչ խղճալի մարդ եմ ես :»

Գիտեմ որ միշտ բարին՝ բարի , չարն է չար ,
Բայց ընտրութիւնս չարին կողմը կ'իյնայ յար ,
Որչափ ըլլամ արարքներուս անաչառ ,
Այնչափ ցաւ կայ սիրտիս ա'րդէն վշտահար .
«Ի՛նչ խղճալի մարդ եմ ես :»

Փրկէ՛ Յիսուս , զիս պայքարէն այս դաժան ,
Թող ծառայեմ միշտ Աստուծոյ օրէնքին ,
Մեղքի օրէնքն չի գերէ սիրտս անարժան ,
Որ այլեքս չ'ըսէ յոգնած իմ հողին
«Ի՛նչ խղճալի մարդ եմ ես :»

1903



«ԱՆՐԱՐՔԱՌ ՀԱՌԱՉԱՆՔՆԵՐՈՎ»

Հոտիմ. Բ. 26.

ՇԱՏ անգամ ես քաշուած անկիւնն սենեակիս,
Ներամփոփում մը կ'ունենամ հողեկան,
Բոլոր յոյզերն, բաղձանքները սրտիկիս
Աղօթքի խուլ զեղումով մը դուրս կուգան,
«Անբարբառ հառաչանքներով :»

Ներքին աչքով մը կը գիտեմ իմ բոլոր
Յանցանքներըս ու մեղքերըս շատ ու շատ,
Գուժն Աստուծոյս զիս պահելու անմոլոր
Կը հայցեմ վրաս եռանդազին, խանդակաթ
«Անբարբառ հառաչանքներով :»

Երբոր տեսնեմ թերացումներն իմ պէսպէս,
— Ձի չեմ գիտեր ըստ արժանւոյն աղօթել.
Բարեխօսող Սուրբ Հոգիին զիս անտես
Չ'ընելուն միշտ կ'աղօթեմ ես անարգել,
«Անբարբառ հառաչանքներով :»

Ու երբ ըզգամ զիս սրբուած մեղքերէս՝
Սիրտս պատարուն երջանկութեամբ անմեկին,
Ու զարձընէ Փրկիչս ինձ իր լոյս երես,
Կը գոհանայ ու փառք կուտայ իմ հոգին.
«Անբարբառ հառաչանքներով :»

Ըլլալու միշտ սիրտով ազնիւ ու բարի,
Ու հոգիով ճշմարիտ ու գեղեցիկ,
Կը վերացնէ ներքին փափաքս զիս կարի,
Այն վիճակին կը տեսչամ ես հիացիկ,
«Անբարբառ հառաչանքներով :»

Ո՞հ, երբ առջևդ պիտի գամ, հող, իմն Յիսուս,
Երգել ազատ փառքըդ, անունդ, Սէրդ անգին,
Ու վայելել երանութիւնն դէմքիդ լոյս,
Ուր պէտք է՞ ունի տառապելու իմ հոգին
«Անբարբառ հառաչանքներով :»

1903



Զ Ղ Ջ Ո Ւ Մ Ի Խ Օ Ս Ք Ե Ր

ԹԱՂՈՒՄՍ մէջը մեղք-տիղմին ,
 Մինչ կ'աշխատիմ երեսել դուրս ,
 Այլ աւելի կ'ընկղմիմ
 Օգնէ՛ ինձի ս'վ Յիսուս :

Ո՛հ , ազատտ իմ աչերուս ,
 Ե՛ս կը դարչիմ սիրտէս չար ,
 Ի՞նչ պիտ' ըլլամ ս'վ Յիսուս ,
 Աչքիդ առջև անաչառ :

Արդէն պիտի զիս դատես ,
 Արժանի ալ եմ անոր .
 Մեղքերս չ'ընես թէ անտես ,
 Ու չի չնորհես ինձ կեանք նոր :

Ո՛հ , ներումի գըթութեան
 Նայուածքիդ կը կարօտիմ ,
 Հաճէ՛ նայիլ մի միայն ,
 Ո՛վ մարդասէր Փրկիչ իմ :

Գիտե՛մ ուխտեր ունիմ շատ
 Ըլլալու սուրբ ու մաքուր ,
 Բայց մեղսալից սիրտըս վատ
 Սէրէն , Յոյսէն է թափուր :

Քանի՞ հեղ Քեզ սիրտս տըւի ,
 Քանի՞ հեղ զայն առի ետ .
 Մի՛րտս աշխարհքի ծարաւի ,
 Միշտ մեղսասէր , չարամէտ :

Բայց արցունքով այս անգամ
 Կուգամ փարիլ Քու խաչին ,
 Գո՛ւն ինկածին բարեկամ ,
 Այս ուխտս ըլլայ թող վերջին :

Ես նոր Անառակ Որդի ,
 Այս նոր ուխտով Քեզ կուգամ ,
 Ուխտս ըլլայ Քեզ լըսելի՛
 Սիրո՛վդ կընքէ՛ այս անգամ :



Ի Մ Ո Ւ Խ Տ Ը

ՈՒՆՏԵՅԻ ես բեկ սիրտով
Յանձնել ինքդինքս Յիսուսին ,
Կ'ըզձամ հանէ ինձմէ թող
Անձնապատան յոյսը սին :

Որովհետեւ փորձով շատ
Տեսայ թէ ես անկարող ,
Չեմ հասկընար սիրտըս վատ ,
Չար կիրքերովն աւերող :

Գաղանիք մըն եմ ինձի ես
Խաւարամած ու անլոյս ,
Գուն աշխարհքիս մեծ լոյսն ես
Լոյսիդ կուգամ ո՛վ Յիսուս :

Հըզարտ սիրտըս ըրէ՛ հեղ ,
Սրբէ՛ մեղքերն իմ բոլոր .
Հողիով Բեզ ողջակէզ
Ըլլալ կ'ուզեմ բանաւոր :

Ուխտեցի ես բեկ սիրտով
Յանձնել ինքդինքս Յիսուսին ,
Ան ինձ նոր կեանք շնորհէ՛ թող
Մաքուր սիրտ մ'ալ միասին :



Ա Ղ Ե Ր Ս Ա Ն Ք

ԿԵՆԱՅ հացը , Բեղի կուգամ ,
Առանց Բեղի կեանք չ'ունիմ ես ,
Տո՛ւր որ այլեւ չ'անօթենամ ,
Քաղց-ճիւղը փախչի դէմէս :

Կենաց ջուրը , Գո՛ւն ես միայն
Այրած սիրտըս զովացընող ,
Յո՛ղն երկնային վըճիտ անքան ,
Ծարաւն սիրտիս յազեցնէ թող :

Լո՛յս անըտուեր , ծագէ՛ վըրաս ,
Ճաճանչներով Բու լուսաշող ,
Որ կորսըին խաւարին աս
Արհաւիրքը սիրտըս մաշող :

Բժի՛շկ ճարտար , Բեղի կուգամ ,
Վէրքերովը սիրտիս արկար .
Հաճէ՛ դընել ձեռքդ այս անգամ ,
Չեռքըդ բուժող ու օգտակար :

Հովիւ բարի, փարախիդ մէջ
Պահէ զիս, հէք ոչխար մողրած,
Որ հոն տեսնեմ խընամք անվերջ:
Հովանույդ տակ բազկատարած:

Փրկիչ Յիսուս, հերիք է ալ,
Որ զրկուիմ Սէրէդ անհուն,
Կուգեմ այլեւ Քեզ հետ մընալ,
Զի յոյս, կեանքս է սո՛սկ Քու անուն...:

1903



Տ Ո Ւ Ր, Տ Է՛ Ր

Ո՛հ, աչազուրկ իմ, հողիւս աչեր
Ձեռն տեսներ Քուկին փառքի լոյսդ անչէջ,
Կուգեմ մօտենալ սիրտիդ սիրաջեր,
Պահէ զիս Յիսուս, գըթոտ սիրտիդ մէջ,
Տուր Տէր,
Լոյս տուր աչերուս:

Ձեմ տեսներ ո՛վ Տէր մեղքերըս զազիր,
Կամաւոր կոյր մը կ'ըլլամ ես ինձի,
Ու չեմ խորհիր թէ կեանք մը անբասիր
Անցընել այսպէս չէ ինձ կարելի.
Տուր Տէր,
Լոյս տուր աչերուս:

Քայլերըս կ'առնեմ մէջը խաւարին,
Անվտանգ յառաջ կ'երթամ խօլարար,
Գիտնալ չեմ ուզեր թէ այսպէս դիւրին
Է սայթաքիլ ինձ ու դեղեկիլ յար:
Տուր Տէր,
Լոյս տուր աչերուս:

Այսպէս զրկըւած աչքէ հոգեկան ,
 Առաջնորդ մըն եմ ես իմ կոյր «եռ»ին ,
 Կոյրեր իրարու թ՛առաջնորդ ըլլան
 Չէ՞ որ երկուքն ալ կ'իջնան մէջ փոսին .

Տուր Տէր ,
 Լոյս տուր աչերուս :

Լոյս տուր Տէր Յիսուս , Լոյս տուր աչերուս ,
 Թող ալ փարատին վախեր խաւարին .
 Որովհետեւ Դո՛ւն սոսկ ս'վ անշէջ Լոյս ,
 Այս կեանքիս ուղին ինձ կ'ընես դիւրին

Տուր Տէր ,
 Լոյս տուր աչերուս :

1903



Դ Ո Ւ Մ Ի Ա Յ Ն Ո՛Վ Տ Է Ր

ՄԻՐՏԸՍ կը տապկի ծարաւով մ'անհուն ,
 Մինչ անշանքներու կըրակը ներքին
 Կը սոչորէ զիս կրկին ու կրկին ,
 Ծարաւըս մարտղ կայ սոսկ մէկ անուն ,
 Դո՛ւ միայն ս'վ Տէր :

Հարստութիւններն աշխարհիս գիտե՛մ ,
 Ծովու ջուրեր են լեզի ու աղի ,
 Խմողին ծարաւ կուտան կատաղի ,
 Անըսպառ գանձս ես ազքատութեանս դէմ ,
 Դո՛ւ միայն ս'վ Տէր :

Իսկ փառքի սէրը , պատիւ ու համբաւ ,
 Միայն կարճ կեանքի օրերուն համար ,
 Չէ , չեն դիւթեր զիս , չեմ այդչափ յիմար ,
 Պիտի տաս ինձի փառք , պատիւ անբաւ
 Դո՛ւ միայն ս'վ Տէր :

Գիտութիւններն ալ անհասնում, անվերջ,
Չեն գոհացըներ միտքիս մեծ «խնու»ն,
Հոգիս վերասլաց միշտ կ'ընէ իր չուն,
Իմաստութեան լոյսն վառ պահէ իմ մէջ,
Դ՛նւ միայն ս'վ Տէր:

Հարստութիւն, փառք, գիտութիւն, հանճար,
Ամէնն ալ կ'անցնին, զի հունաւոր են,
Մարդկային հոգին յագեցնող վերէն
Մշտագո՛յ էակ, կաս անհուն, անճառ,
Դ՛նւ միայն ս'վ Տէր:

1903



Փ Ա Յ Լ Ե Յ Ո՛Ւ Ի Բ Վ Բ Ա Ս

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ լերան վըրայ, հո՛ն,
Հեղ մը հագար երբ փառքերդ երկնային,
Սոսկ զէմքդ երկինք մ'էր պերճ, անհարիզոն,
Որուն աշակերաներդ զարմանային:

Երեսէդ փայլեց արեգակը վառ,
Հանդերձներդ եղան փայլուն, խի՛տո ճերմակ,
Որ թափիչներուն երկրիս անհընար
է ճերմըկցնել անոր պէս համակ:

Պահ մը երկինքը հոն իջաւ փառքով,
Լուսաւոր ամպեր հովանի եղան,
Մովսէսն, Եղիան վար եկած Քու քով
Խօսեցան հետըդ մեծ գործիդ վըրան:

Միս, Յիսուս, գիտեմ, փառքըդ է անհուն,
Աստուածութիւնովդ իջար, մարդ եղար,
«Սիրելի Որդի» է Քու սուրբ անուն,
Ամենակարող ես, անհո՛ն, անճառ:

Փայլեցո՛ւր վըրաս սոսկ շողիկ մը գէթ
Այլակերպութեան լերան շողէն վառ,
Որ խաւար խորհուրդներս ըլլան անհետ,
Նոր կեանք ըստանայ սրտիկըս թշուառ...:

1903



Ս Ի Ր Տ Ի Ս Խ Ո Ր Ե Ր Է Ն

ՉԱՅՆՈՎ մը արկար ու աղաչաւոր,
Գարշանքի աղտոտ յափրացումին մէջ,
Յողնարեկ պայքարներու մէջ անվերջ,
Յիսուս, կը կանչեմ՝ Բեզի ամէն օր
Սիրտիս խորերէն :

Խենէշ կիրքերու ձեռքերը լլկոտ,
Փեթըրանցին սիրտ-ծաղիկը մաքուր .
Քանդեցին համակ հոգիս ամրակողս,
Աւերումիս մէջ Բեզ կ'ըզձամ ինձ մօտ
Սիրտիս խորերէն :

Խողի բընոյթով նորէն ու նորէն,
Սիրտըս անմաքուր ու տղամաթաթաւ,
Յեխերու մէջը սուղեցաւ տակաւ .
Բեզի կը գոչեմ ցաւազինորէն
Սիրտիս խորերէն :

Ո՛հ, կեանքըս բոլոր պժգանք մ'անդադրում,
Չար հաճոյքներու մէջ իսկ ցաւատանջ .
Լոյս-ցորեկներըս նսեմ, անճաճանջ,
Բոպէ մը գէթ կը ցանկամ անտրտում
Սիրտիս խորերէն :

Բիշ է թէ բոլոր օրերըս ըլլան
Կոչ մը հոգեցունց, աղերս մ'աղեկէզ,
Ու միշտ բարձրանան վեր, վեր, դէպի Բեզ,
Բուրվառէն խունկի գալարին նման
Սիրտիս խորերէն :

Հերիք թափեցի արցունք զզձական,
Հերիք մրկեցայ կիրքերու բոցով,
Ա.ս զիս այն երկիրն ուր «ալ չի կայ ծով,»
Որուն կը քաշեմ կարօտը այնքան
Սիրտիս խորերէն . . . :

1904





Տ Ա Ռ Ա Պ Ա Ն Ք Ը

ՄՈՒՇԵՂՂ ՎԱՐԳԱՊԵՏԻՆ

ԿՐԿՆՈՒՄՆԵՐՈՒ ճօճումներով արծարծուն
կրակն է ան բուրվառին ,

—Տառապանքը—որուն մէջ մեր
Սիրան ու հոգին կը վառին ,
Խնկումներու մէջ յաճախ թաղծուն ,
Ծառանալով միշտ վեր , միշտ վեր
Մխացումով մը լռին . . . :

Հալոց մ'է ան , մեծ քուրայ ,
Տառապանքը՝ որուն մէջ մեր խարամոտ
Հոգին որչափ որ մընայ ,
Կը հալի ու զտումով մը խնամոտ
Կը մաքրուի , նոր փայլ կ'առնէ իր վրայ ,
Հերիք է որ ան սաստիկ կըրակին ,
Ըլլայ մէջը կամ շատ մօտ :

Մեծ , վիթխարի երկանաքար ,
Որ կը դառնայ ոյժով մ'անտես
Անդուլ , անդադար ,
Ու հոն մեր հոգիներ վէս
Կ'ըլլան նաչի՛ն ազնիւ , բարակ ,

Որ սեղանին բաժինն է արդար ,
Աստուածընկալ պատարագ . . . :

Տառապանքը , ան խարտոցը հոգիին ,
Խարտոցը՝ որ ժանգը անոր
Կը տանի բոլորովին ,
Ու կը պճնէ փայլով , ցոլքով նորանոր ,
Եւ զայն դիտող Փրկչին աչքեր ,
Մեր հոգիին մէջ աեանեն հին
Իր տիրական անեղծ կնիքն ու պատկեր :

Տառապանքը Յիսո՛ւս , Բեզ ալ ,
Գեթսեմանին տաղնապներով չարչրկող
Փորձեց պահ մը հոգիդ , կամքդ անայլայլ ,
Քանի որ Դուն հազած էիր մարդը հող ,
Փառք Բեզ Փրկիչ որ յաղթական
Ելար մահուան փոսէն մռայլ ,
Օրինակը ինչ խրախուսիչ ու վեհ ա'յնքան . . . :

Չէ՛ , չէ՛ , Յիսո՛ւս , չեմ տրանջար ,
Տառապանքի ժանիքին տակ բըզկտող՝
Որքան ուղէ փորձողը չար
Իր դրդումներ կրկնէ թող
Տառապիմ թող , հոգիովըս գո՛հ եմ բոլոր ,
Բայց հաճէ՛ , Տէ՛ր , տառապանքներս լոյսիդ անճառ
Հոգիս տանին անմոլոր . . . :



Հ Ո Վ Ե Ի Ո Ր Ն Ա Խ Ա Ն Ձ

ԱՎԻԼԻՆԵՒՆ

ՀՈՎԵԻՈՐ կան՝ որ սրբութեան ճամբուն վրայ
 Յառաջացեր, շատ, շատ միջոց են կարեր,
 Անոնց կեանքին աւելցրւած կարճ օրեր՝
 Ակաղձուն են շքնորհքներով սիրահմայ :

Հոգիներ կան՝ պճնագարդուած պերճօրէն,
 Բարի գործի ծաղիկներով խնկահոտ,
 Որոնց յայտնի պողաւորումն է շատ մօտ,
 Սէր, Յոյս, Հաւատք զանոնք յաւէտ կ'օրօրեն :

Հոգիներ կան՝ ազնիւ, վրսեմ, բարի, սուրբ,
 Որոնց ա՛յտոեղ երանութիւնն կ'ըսկսի .
 Անոնց համար չեն երկիւզներն օրհասի,
 Հո՛ս կը վայլեն սուրբ հաճոյքներ գերանուրբ :

Հոգիներ կան՝ որ հո՛ս եղած են հրեշտակ,
 Երկինքի մէջ հրեշտակներով մրցելու,
 Կամ երկինքէն եկած են հոս այցելու,
 Յուցնելու մեզ երկինքի կեանքն, խի՛նդ համակ :

Եւ վերջապէս հոգիներ կան որ բոլոր
 Երանութեան շքնորհքներով պատարուն,
 Եղեմն ունին մէջը իրենց սիրտերուն .
 Մութ աշխարհքիս մէջ լոյս ունին երկնաւոր :

* * *

Բայց դուն հոգիս, դուն միայն կաս շնորհագուրկ,
 Ու մերկացած երանութեան ըզգեստէն,
 Մեղքի ալիք քու հիմերդ կը խախտեն,
 Չարն կը խեղդէ ինչ որ մէջդ կայ բարի, սուրբ :

Չե՛ս նախանձիր հոգիներուն երջանիկ,
 Նախանձով մը բարի, յառաջ մղող քեզ,
 Հերիք այսպէս կը մորմոքիս վշտակէզ,
 Հերիք սուրբ կեանքն մընայ քեզի մութ գաղտնիք :

1903





ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՀՈՒՍՏՔՍ

ԺԱՄԱՆԱԿ մը կար երբ մանուկ սիրտով ,

Անմեղ սէրերուս նըւիրուած համակ ,
Ամբողջ կեանքս էր պաշտում մ'անվրդով ,
Թափովն հողիս մաքսւր , մանկունակ :

Հողիս ստաճար մ'էր , հաւատք մ'յարարծարծ
Կը մխար անկէ՝ թէեւ անզխտակ ,
Սեւեռումով մը ինքնատուր , անդարձ ,
Կրօնքի թեւերուն կը նետուէի տակ :

Օր մը կասկածի քամին մահաշունչ ,
Պարզուկ հողիս փըչեց վրայէն ,
Տերեաթափ մը խամրեց սիրտըս փունջ ,
Ա՛լ պղտորուած էր հաւատքս ա՛յն օրէն . . . :

Շատ բան կտրուսի ա՛յն օրէն ի վեր ,
Շատ չնորճներուս մերկացայ փառքէն .
Չարին նետերով խոցուած կարեվէր ,
Մոլորած մ'էի ու խեղճ ապաքէն :

* * *

Հին օրերուս այն բիւր բարիքներէն ,
Շատերուն բաղձայ հողիս դեղեւկոտ .
Բայց ա՛լ աւելի անձկայրածօրէն
Մանուկ հաւատքիս կը քաշեմ կարօտ . . . :



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՄՏԱՆՈՒՄՆԵՐ

ՀԱՆԳՍՏԵԱՆ օր մըն ալ անա ս'վ Տէր ,
Եկաւ շքնորճքի բիւր բարիքներով ,
Խաղաղցընելու սրտիկըս խրոտվ .
Ինչո՞ւ դեռ վրդով եմ ս'ն , չեմ գիտեր :

Սուրբ օր մ'ալ անա , սուրբ համակ ս'վ Տէր ,
Եկաւ սրբութեան արեւ ծաթելու ,
Բայց սուրբ ըլլալէ ես դեռ շատ հեռու՝
Ինչո՞ւ կը պժգամ ինձմէ , չեմ գիտեր :

Օրերու մէջ այս Քուկըդ է ս'վ Տէր ,
Քու լոյս երեսիդ ցուքերով օծուած ,
Քուկըդ ըլլալու յոյսը յարարծարծ
Ինչո՞ւ չի վառեր զի՛ս ալ , չեմ գիտեր :

Շքնորճքի օր է այս գիտե՛մ , ս'վ Տէր ,
Անոնց որ պատրաստ են անոր համար ,
Բայց իմ հողիս դեռ անտարբեր , յիմար ,
Ինչո՞ւ իր լապտերն չ'առնէ , չեմ գիտեր :

Պենտեկոստէ մ'է այս օրըդ ս'վ Տէր,
 Բերող մեզ Հոգւոյն ձիրքեր բաղմածու,
 Տալու ոյժ, եռանդ մեզի յարատեւ,
 Ինչո՞ւ տկար եմ ես դեռ, չեմ գիտեր:

Յարութեան օրն է այս գիտեմ, ս'վ Տէր,
 Այսօր յաղթեցիր կայերուն մահուան,
 Բայց իմ հողիս դեռ անչարժ, անկենդան,
 Ինչո՞ւ մեղք-չիրմին մէջն է, չեմ գիտեր:

* * *

Ո՛հ, ո՛չ հանգստեան, ո՛չ սուրբ օրդ ս'վ Տէր,
 Ո՛չ շքնորհքներուդ, ո՛չ ալ Գուկին օր,
 Ո՛չ Պենտեկոստէն, ո՛չ Յարութիւնդ, նոր
 Կեանք մ'ինձ չի բերին, կորսուած եմ դեռ:

Դո՛ւն սոսկ, Դու՛ն եկուր երկինքէն ս'վ Տէր,
 Կորսուած ոչխարդ ուսիդ վըրայ առ,
 Ու տար երկնային փառքիդ լուսավառ,
 Դո՛ւն սոսկ, Դու՛ն եկուր երկինքէն ս'վ Տէր:



Վ Ե Ր Ե Լ Ք Ն Ե Ր Ը

ՏՕԲ. 3. Ս. ՄԱՀՏԵՍԵԱՆԻՆ

Վ Ե Ր Ե Լ Ք Ն Ե Ր Ը կան աշխարհիս մէջ շատ ու շատ,
 Քանի որ այս վիճակներու

Վայր մ'է, ուր մենք խանդակաթ
 Չուկէտները մեր հեռու
 Հետապնդումի թափով մ'անվնատ,
 Կը դիմագրաւենք քայլերով հաստատ:

Հարստութեան վերելքը կայ դժուարին,
 Ուր շատեր կը մագլցին,
 Ու մինչև իսկ կը յօժարին
 Տուայտանքներ տալու իրենց հէք անձին.
 Սեւեռամոյն իրենց անթարթ՝
 Կ'ըլլան դժգոհ ու անհանդարտ:

Պատիւի ու փառքի ալ կան վերելքներ,
 Ուր մեր «Ես»ը ամբարտաւան
 Իրեն յագուրդ ու գոհացում չի գտներ՝
 Մինչ մեր կուրծքեր վաստակարեկ կը հեւան.
 Փառամոլի մեր մարմաջը յարարժարժ
 Կը խթանէ, վեր կը մղէ մեզ անդարձ:

Գիտութիւնն ալ վերելքներու,
Շարք մը տնի երկարող,
Որ կ'օղակուի հեռու, հեռո՛ւ,
Ծայրը տեսնել չենք կարող.
Բայց նորէն միշտ տենչով մ'անյազ
Առաջ կ'երթանք եռանդ համակ:

Ու արդէն մեր կեանքը բոլոր
Վերելքէ զսա ի՛նչ է որ,
Որուն մէջի արահետներ ոչոր-մոլոր,
Կառաջնորդեն մեզ օրէ օր.
Ու ջլապինդ կեանք-դերբուկին,
Վերելքն ընել յար կը ցանկայ մեր հողին...:

Բայց իմն Յիսո՛ւս, մեր վերելքներ ետանքը,
Ի՛նչ են քովը Գողգոթայի վերելքին,
Որուն սիրով մ'անձնուէր
Յօժարեցաւ Քու մեծ հողին...:
Ո՛հ, մշտաբուղիս Սէրըդ Յիսո՛ւս,
Կեանք-վերելքիս մէջ ըլլայ ինձ անխախտ յոյս...:



Մ Ե Ղ Ա՛Յ Տ Է Ր

ԱՆՈՒԱԿՆ եմ զատուած տունէն հայրական,
Ուժացումիս, տուփանքներուս ծայրն հասած,
Հեռո՛ւ գացի օտար երկիր մը անդարձ,
Ու վատնեցի չնորճքի բաժինըս ա յնքան.
Որդիութեան իրաւունքէն զուրկ եմ ալ,
Չեմ արժանի նոյն իսկ ծառան Քու ըլլալ,
Մեղայ՛ Տէր:

Մաքսաւորն եմ, արարքներով անարդար,
Ուրիշներու իրաւունքով սոնքացած
Հողիս ինկած, թաթաւուն է գեանամած.
Գիշեր ցորեկ չ'ունիմ հանգիստ ու զաղար.
Սչերս երկինք վերցնելու անարժան,
Կը տառապիմ մեղքի բեռին տակ դաժան,
Մեղայ՛ Տէր:

Աւազակն եմ կեանքըս չաղուած ոճիրով,
Կողոպտումի, ըսզանութեան չար մշակ,
Մոսկ արիւնի ունեցայ ես ախորժակ,
Խաղաղութիւն չ'ունի երբէք սիրաս խըռով.
Ու անարժան Քեզ խաչակից ըլլալու,
Հողիս ցամքած, արցունք չ'ունիմ իսկ լալու,
Մեղայ՛ Տէր:

Չար ծառան եմ, քանքարները Բու թաղող,
Գործածելու ու չահելու միշտ անհող,
Արդարութեան դէմ կը բառնամ խեղ բողոք.
Երկրասէր եմ ու կը միտիմ դէպի ի հող,
Քու երկնաւոր անտեսութեանդ ուտիչ, ցից,
Արդար է երբ դատէ զիս Բու սիրտը մեծ,
Մեղայ Տէր:

Վաս մշակն եմ, Բեզ Բու այգիէդ վարող
Ընկերներուս չարութեանը մեղսակից.
Բեզ առթեցի աններկի ցաւ, կսկիծ,
Ալ լոյս երեւող նայելու եմ անկարող.
Կարծեցի թէ կրնամ խելը Բու բաժին,
Ու արժանի եմ գեհննի կրրակին,
Մեղայ Տէր:

Կողըդ ծակող զինուորն եմ չար ու անգութ,
Քու բարութեան, արդարութեան կոյր դարձայ,
Չարչարեցի, նախատեցի անխընայ,
Հրպարտացայ չարութիւնով անօգուտ.
Պուտ մ'իսկ չընորհք թէ չի ցողես իմ վրայ,
Դուն արդար ես, թող միշտ Բու կամքըդ ըլլայ,
Մեղայ Տէր:

Մեղայ, մեղայ Բեզ դէմ իյաչի նահատակ,
Մեղայ Սիրոյդ ներող, անհուն, անբազառ,
Մեղայ ըրած սուրբ Քաւութեանդ հրաշափառ,
Մեղայ չնորհքի յորդութեանդ դէմ անյատակ.
Մեղայ առջեդ ու երկիրքին դէմ մեղայ,
Չար, անպիտան, մահուան մըչակ մը եղայ...:
Մեղայ Տէր:



Մ Ո Ղ Ո Ր Ե Ա Լ Ը

ԱՍՏԱՆԴԱԿԱՆ մուրեկալը սարէ սար
կը թափառի մայիւններով տխրաւանկ,
Որուն ցաւոս կոչերուն տան արծազանգ,
Լեռ ու հովիտ, բլլուր ու ձոր հաւասար:

Արիւնարբու գաղաններու սարսափէն
կը դողդըղայ, նօթի, ընկճուած, պարտատուն,
Չունի հանգիստ, չունի դադար, չունի քուն,
Ոլոր-մոլոր ձամբաներ զինք կը խաբեն:

Իր հովիւին սրինգին քաղցրը մեղեդին
Չի հնչեր ալ ականջներուն, դուրկ խպառ,
Առաջնորդող չի լսեր ալ ոչ մէկ բառ,
Ո՞ւր ապահով տաքուկ փարափն իր հօտին:

Մինչ ընկերներն այնտեղ խընամք վայելեն,
Արօտներէն ճարակելով խոտ դալար,
Ինք հոս գոնէ պահ մը ապահով ըլլար.
Կը պարտասի թափառելէն, մայելէն:

Ու օրը կը տարածամի, գայ դիչեր,
Ունումներու ձայներ լսուին հեռուէն.

Սոսկունն ու մութ իր հոգին կը խըռովեն ,
Ու կը գոցեն ճամբան թուփեր ու փուշեր :

Ո՞ւր մուրեալ , ո՞ւր այդպէս խեղճ , յուսահատ ,
Չե՞ս լսեր քու հովիւին քաղցրը կոչերը .

Չէ՞ որ ան է քուկին պաշտպանն ու տէրը ,
Եւ կը փնտռէ քեզ օրերով անվրճատ :

Կը յուսամ որ փարախէդ զառ տեղ մը կայ ,
Ուր պիտի քու կեանքդը ըլլայ ապահով ,
Չի տառապիս սարսափներով ու ահով ,
Ու վտանգներ պիտի չ'ըլլան ապագայ :

Չէ՛ , ալ դարձի՛ր , մտիկ ըրէ հովիւին ,
Որ լեռնէ լեռ քեզ կը փնտռէ տառապած ,
Թէ՛ն ծոռկերն կը կ'իտան , թե՛ն է բաց ,
Գնա՛ ինքզինքդ անոր յանձնէ սրտովին . . . :

* * *

Ո՛վ մուրեալ հոգիս , դուն ալ չո՛ւտ դարձիր ,
Քաջ հովիւին , որ դրաւ անձը քեզ համար ,
Ու ներեց քեզ քու մեղքերը անհամար ,
Դարձիր Անոր բաց թեւերուն կենսաձիր . . . :

1904



Դ Ա Ր Զ Ը

ԹԵՐԱՓՆԵՐ ունիմ իմ հոգիին խոր ,
Ուր պէտք էի Քեզ սրբատուն հիմնել .
Պիղծ պաշտամունքին մէջ անոնց անել՝
Կըռապաշտ հոգիս թաղուած է բոլոր .
Ու այս կուռքերուն առջև սընտոի ,
Սիրտըս կը մրկի , կը ճենճերտոի :
Դժոխք մը կրակ մոխրեց հոգիս ,
Դո՛ւն ընտրուած անօթ մ'ըրէ զիս :

Կարօտներ ունիմ որ գիշեր ցորեկ
Կը վրդովեն զիս գոհացման տենչով .
Յար բաղձանքներու աշխարհ մ'հոգեթով
Կը բացուի առջևս հրապոյրով նորեկ .
Աշխարհասէր մ'եմ դիւրախաբ , տըգէտ ,
Ճշմարիտ շահըս որոշէի գէթ :
Հոգի մ'հառաչ սիրտըս ցնցեց ,
Դո՛ւն եղիր իմ կարօտը մեծ :

Խրաովքներ ունիմ սիրտիս մէջ վրդով ,
Որ կ'ալեկոծուի իմ ներքին ծովին
Յոյզ-ալիքներով , ու բոլորովին
Ծովախտաւոր մ'եմ տարուքերումով .

Նաւահանգիստի այն խաղաղութեան
Բոլոր հոգիովս կը բաղձամ միայն :
Սիրո մը կսկիծ մորմոքեց զիս ,
Դուն խաղաղցուր անձս թէ հաճիս :

Տաղնապներ ունիմ որոնց մէջ յաճախ
Խղճախայթերու սուր փուշերուն տակ ,
Ծակծրկուած սիրտըս կ'արիւնի տաք , տաք . . . ,
Որ արդէն ընկճուած , կտորած է ջախջախ .
Ու զղջումի դառն ներբողագումով ,
Ինք իր մէջ թափի սիրտս յարախրուով .
Ծով մը արցունք աչքէն պոռթկաց ,
Դո՛ւն փրկութեան ինձ դուռը բաց :

* * *

Բայց մոռցած ասոնց բոլորը Յիսո՛ւս ,
Քեզի կը դառնամ , Քեզ որ ինձ համար
Կրեցիր Խաչին ցաւեր չարահար .
Ալ ցցո՛ւր ինձի Քու երեսը լոյս .
Ու այս դարձըս թող վերջինը ըլլայ ,
Որ այրիացած հոգիս ալ չի լայ . . . :
Երկինք մը չնորհք բաղձայ հոգիս ,
Դո՛ւն Քու փառքիդ ընդունէ՛ զիս :

1904



Փ Ո Ւ Շ - Պ Ս Ա Կ Ն Ե Ր Ը


ՄԵՂՔԵՐԸՍ՝ խոցող փուշերով դաժան
Տուայտանքներու պսակ մը հիւսեցին
Գլխուս անարժան ,
Եւ ուղիս-արցունքներ իմ ողբ ու լացին
Չեն կրնար բուժել սիրտիս վէրքեր բիւր ,
Ձի հոգիս դարձաւ լլկանքի աղբիւր :

Կեանքիս օրերը մեղսալից , զազիր ,
Քանի երկարին ինձ կը բոլորեն
Փուշ-պսակ մը , տանջանքովս իր
Կը տառապեցնեն հոգիս դառնօրէն .
Ու այս պըսակին փուշ-համբոյրին տակ
Սիրտըս կ'արիւնի տաք , տաք . . . :

Եւ այս աշխարհիս գոհացումներով
Քանի պըսակուին իղձերս բռնկող ,
Սրտիկիս վրդով
Աշխարհք կ'ըլլայ փուշ-պսակ մը արիւնոլող .
Որուն խոցերուն գիտակից թէև՝
Նորէն գոհացում կ'ըղձամ յարատեւ :

Փուշ-պսակներու այս հոգեչարչար
Տագնասակներուն մէջ Քեզ կուգամ՝ Յիսուս,
Քու Սիրոյդ անճառ.
Այն փուշ-պսակիդ—մեր վարդագոյն յոյս—
Հանած արիւնով սրբագործուի թող
Իմ սիրտը աղտոտ ու հոգիս վրդով...:

1904



Ծ Ա Ղ Կ Ա Չ Ա Ր Դ Ը

ՏԻԱՐ Հ. ՅԱԿՈԲԵԱՆԻՆԵ

Երբ գարունը գայ երկններանց տեսքով,
Թրթռացընելու ժպիտը կեանքին,
Իր հրապոյններու շարքերով անգին՝
Պարզէ իր բոլոր շնորհքներ քովէ քով.
Դաշարներ հագնին երբ դաշտ ու անտառ,
Նոր երգեր հիւսեն թռչուններ աղւոր.
Ու գով զեփեւը փրչէ անդադար,
Բացուած ծաղիկներն գգուելով բոլոր.
Երբոր սաւառնի շունչ մը խնդութեան,
Օրրելով ուրախ հոգիներ համայն
Ծաղկազարդն է բնութեան:

Երբոր համերաշխ սէրն եղբայրական
Համայն մարդերու սիրտերուն տիրէ,
Ու հաճոյք չի զգան չարութիւններէ.
Սեւ փոթորիկներ չ'ունի ապագան.
Երբ նօթիին ձեռք հաց կարկառող կայ

Ու լացող աչքին արցունքը սրբող,
Ալ չեն անպատուեր իրար անխընայ,
Կը սիրեն անկեղծ հիւսելով ներբող.
Երբ վերցուած են պատիժներ դաժան՝
Ձի չէ մնացեր մէկ մ'անոնց արժան,
Ծաղկազարդն է մարդկութեան :

Երբ ես ալ վանած խոհերս յուետես,
Երջանկութեան եմ տուած իմ ձեռքեր,
Ու գըտած յոյսի կուռան մ'աներեր.
Մերկացած բոլոր սև կասկածներէս.
Երբոր Աստուծոյս սիրտըս կը բանամ,
Որ հոն կաթեցնէ ցօղն ըսփոփանքի,
Սիրտ-բուրաստանըս երբ չէ անխընամ,
Ու չարին արմատն ալ հոն կը ցամքի.
Երբ սրբուած եմ, մաքրուած կրկին,
Ու փրկուած է իմ ինկած հոգին,
Ծաղկազարդն է իմ սիրտին . . . :

1904



Մ Ի Շ Տ Ա Ն Հ Ա Ս Տ Ա Տ

ԿՈՒՋԵՄ ըսալ երկրպագող մ'Ենովային,
Բայց կը պաշտեմ չար Բանաղն ալ դըժոխային,
Մինչ Աստուծոյ ծառայելու ունիմ փափագ՝
Մամոնային կը տանջուեմ տենչովն անյագ :

Ձեռքիս մէկը օրէնքներուդ վըրայ դըրի,
Իսկ միւսըն ալ վայելքներուն այս աշխարհի,
Քեզ ս'վ Յիսուս, կ'ընտրեմ ինծի մինչ բարեկամ,
Սիրտիս մէջ սև սատանին ալ տեղ մը կուտամ :

Քու երկնաւոր լոյսիդ ունիմ մէջըս կարօտ,
Բայց խաւարին պատրանքներուն միշտ կ'երթամ մօտ,
Կ'ուզեմ սուրբ կամքդ կատարել ու փափաքդ յարգել,
«Ես»իս իղձեր կը գոհացնեմ յար, անարգել :

Միշտ սրբութեան բարձունքները կ'ուզեմ ելնել,
Բայց չարութեան կ'իյնամ մէջը փոսին անել,
Աջովս կ'ուզեմ վերաշինել գեղակառոյց,
Ունիմ ձախովս քանդելու տենչն վաղայարոյց :

Կեանքի սիրով կը բարախէ կուրծքըս արկար,
 Բայց մահասէր ունիմ իղձեր ալ ցաւագար,
 Հոս կը պատեմ սիրտիս վէրքերը բիւբաւոր,
 Հոն խոր խոցող կուտամ հարուածներ նորանոր:

Միշտ անհաստատ, հակասական այս վիճակիս,
 Չի դիմանար ալ պարտասուն, մարած հողիս.
 Ալ հաստատէ՞ զիս սրբութեան շաւիղին մէջ,
 Որ հրճելիմ փրկութեան նոր յոյսով անվերջ:

1904



Վ Ե Ր Ձ Ի Ն Թ Ի Ը

ԱՇԽԱՐՀԻԾ մէջ երբ ապրեցար մեզ հետ,
 Տեսար մեր կեանքին ցաւերը բոլոր,
 Փորձութիւններ չարաղէս,
 Թէև մեզքի չ'ունեցար սէր.
 Ու անոր համար սիրով ամէն օր
 Բուժեցիր մեր ցաւեր:
 Կազերուն՝ ոտք, կոյրերուն՝ լոյս,
 Համբերուն՝ լեզու, խուլերուն՝ ականջ
 Շնորհեցիր, ու նոր յոյս
 Հողիներուն մեր ցաւատանջ:
 Բայց ձրիարաչի բարիքներէդ վերջ,
 Որոնք ըրիր Քու կեանքիդ մէջ,
 Յաւիտենականութիւն մը կ'արժէր
 Քու վսեմ, անգին
 Երկրաւոր կեանքին
 Վերջին օրը...:

Երբ կ'ապրիմ ես ալ աշխարհքիս վրայ,
 Փորձութիւններով կեանքիս երկրաւոր,
 Տո՛ւր որ Քու ձեռքդ ինձի ըլլայ
 Պաշտպան ամէն օր.
 Կարող ըլլամ ես ալ օգնել
 Անոնց որ ինկած են մէջը գուրին

«Տէր, աղէկ է որ հոս կենանք» . . .	62
«Հոգին յօժար է՝ մարմինը սկար» . . .	63
Քու կամեց ըլլայ	65
«Տէր՝ յե՛հ՛ զիս»	67
«Յիսուս լացաւ»	69
Հոգիին սանարը	70
Անհուն սերը	71
Հին մարդը	72
Ներքին պայքարը	74
«Անբարբառ հառաչանքներով» . . .	76
Զոյրուսի խօսքեր	78
Խե՛ն՛իսը	80
Աղերսանք	81
Տուր, Տէր	83
Դու միայն ո՛վ Տէր	85
Փայլեցո՛ւր վրաս	87
Սիրքիս խորեքէն	88
Տառապանք	90
Հոգեւոր նախանձ	92
Մանկուբեան հաւասփ	94
Կիրակնօրեայ մտածումներ	95
Վերելքները	97
Մեղա՛յ Տէր	99
Մոլորեալը	101
Դարձը	103
Փու՛ւ-Պսակները	105
Ծաղկազարդը	107
Մի՛ս անհաստատ	109
Վերջին օրը	111

<< Ազգային գրադարան



NL0313678

24831

۵۵۹



ف عمومیه نظارت جلیله سنک ۱۴ محرم ۱۳۲۳ و ۸ مارت
۱۲ تاریخی و ۱۱۱۵ نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدر